



HAL
open science

,
Gagik Harutyunyan, Arestakes Simavoryan, Vahram Hovyan, Tigran
Ghanalanyan

► **To cite this version:**

Gagik Harutyunyan, Arestakes Simavoryan, Vahram Hovyan, Tigran Ghanalanyan.
, . 2013, 978-9939-825-22-9. hal-03240585

HAL Id: hal-03240585

<https://hal.science/hal-03240585>

Submitted on 28 May 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ՍՓՅՈՒՌՔԻ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

*Կազմակերպչական խնդիրներ և
համագործակցության հեռանկարներ*

Երևան
2013

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ս 989

Ս 989

Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. - Եր.:
«Նորավանք» ԳԿՀ, 2013. - 200 էջ:

Հետազոտությունը նվիրված է Սփյուռքի գիտավերլուծական ներուժի բացահայտմանն ու գնահատմանը: Փորձ է կատարվել վերհանել արտերկրի ակադեմիական կառույցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող հայկական մտավոր ռեսուրսները: Ձևավորվել է գիտավերլուծական աշխատանքով զբաղվող սփյուռքահայ մասնագետների տվյալների շտեմարան:

Հետազոտության առանցքային խնդիրներից մեկը սփյուռքահայ մտավոր ներուժի ուղղորդումն է ազգային խնդիրների լուծմանը: Այդ նպատակով մշակվել են սփյուռքահայ և հայաստանյան գիտնականների, փորձագետների համագործակցության մեխանիզմներ:

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-9939-825-22-9

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2013
© «Նորավանք» ԳԿՀ, 2013

*Գիրքը հրատարակվում է
ՀՀ Մփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա*

Հեղինակային խումբ՝
Գագիկ Հարությունյան
«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների
կենտրոնի ղեկավար

Արեստակես Միմավորյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար

Վահրամ Հովյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ

Տիգրան Ղանալանյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	5
ԳԼՈՒԽ 1 ՍՓՅՈՒՌՔԻ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	11
ԳԼՈՒԽ 2 ՍՓՅՈՒՌՔԻ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԱՐԴԻ ՊԱՏԿԵՐԸ	24
2.1 Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունը	24
2.2 ԱՄՆ հայ գիտավերլուծական հանրությունը	107
2.3 Գիտավերլուծական ներուժը այլ երկրներում	136
ԳԼՈՒԽ 3 ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ	173
3.1 Միջազգային փորձը	173
3.2 Համագործակցության առաջարկվող ուղիներ	182
ԱՍՓՈՓՈՒՄ	190
ՔԵՅՈՄԵ	193
SUMMARY	196

ԱՌԱՋԱԲԱՆ

Սփյուռք ունեցող երկրներին բնորոշ է համազգային ներուժի համախմբումը հայրենի պետության հովանու ներքո: Նման քաղաքականությունը պայմանավորված է մի շարք նկատառումներով, որոնցից, առաջին հերթին, արժե հիշատակել հետևյալ երկուսը: Նախ՝ Հայրենիքի շուրջ արտերկրի նշանավոր անհատների, կազմակերպությունների, կապիտալի և այլնի համախմբումը լուրջ հիմք է Սփյուռքում ազգային-քաղաքակրթական ինքնության պահպանման և ամրապնդման համար: Երկրորդ կարևոր նկատառումը համազգային խնդիրների լուծման ուղղությամբ Հայրենիքի և Սփյուռքի ջանքերի համատեղումն է:

Արդի փուլում Հայաստանում Սփյուռքի հետ հարաբերությունների սերտացումը և համազգային մարտահրավերների սրումն ավելի հրատապ են դարձնում համազգային ներուժի համախմբման և նպատակային օգտագործման արդյունավետ ուղիների ու ձևաչափերի որոնումները: Թերևս, այդ է պատճառներից մեկը, որ վերջին շրջանում Հայաստանում նույնպես Հայրենիք-Սփյուռք համագործակցության հարցը բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի: Դրա վկայություններից է ՀՀ Սփյուռքի նախարարության հիմնադրումը 2008թ. հոկտեմբերին:

Հայրենիք-Սփյուռք փոխգործակցության կարևորագույն ասպարեզ է գիտական և ընդհանրապես մտավոր գործունեության բնագավառը: Այս ոլորտում համակարգված աշխատանքը կարող է էապես նպաստել Հայաստանի ու սփյուռքի առջև ծառայած մարտահրավերների դեմ պայքարի արդյունավետությանը:

Մտավոր գործունեության բնագավառում Սփյուռքի հետ փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել միայն գիտական հիմքերի վրա դրված լինելու պարագայում: Այս ասպարեզում գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների հիմնական խնդիրն է գիտության ոլորտում համագրային ներուժի բացահայտումը և արդյունավետ համագործակցության ուղիների վերհանումը: Այս գիտակցությամբ են պայմանավորված վերջին շրջանում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից գործադրվող համապատասխան ջանքերը, որոնցից արժե հիշատակել հետևյալները.

1. ՀՀ Սփյուռքի նախարարության ջանքերով և այլ կառույցների հետ համագործակցությամբ կազմակերպված տարբեր մասնագիտությունների գծով (բժիշկներ, ճարտարապետներ, իրավաբաններ, քաղաքագետներ, հայագետներ և այլն) կազմակերպված համահայկական համաժողովները:
2. 2009թ. մայիսի 7-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը», որի իրականացման մեջ ներգրավված են ինչպես ՀՀ կառավարական գերատեսչությունները (ՀՀ Սփյուռքի նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարար-

րություն, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ), այնպես էլ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան¹:

3. ՀՀ Մփյուռքի նախարարության պատվերով Մփյուռքի մտավոր ներուժի բացահայտման ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտությունները:

Գիտության բազմաբնույթ և բազմազան ոլորտներից կարևորագույնների շարքին է դասվում հասարակական-քաղաքական կյանքի վրա ավելի անմիջական ներգործություն ունեցող գիտաճյուղերի ամբողջությունը, որոնց ներկայացուցիչներն ընդգրկված են ինչպես ակադեմիական, այնպես էլ ավելի կիրառական նշանակություն ունեցող հետազոտական կառույցների՝ «ուղեղային կենտրոնների» գործունեության մեջ: Նրանց ամբողջությունն ընդհանրական առմամբ ընդունված է անվանել վերլուծաբանական հանրություն: Վերջինս կազմում են հիմնականում հումանիտար ոլորտի գիտաճյուղերի ներկայացուցիչները՝ քաղաքագետներ, տնտեսագետներ, սոցիոլոգներ, իրավաբաններ, կրոնագետներ և այլք: Թեև գիտավերլուծական աշխատանքում գլխավորապես ներգրավված են հումանիտար ոլորտի մասնագետները, այնուամենայնիվ, բնագիտական ոլորտի մասնագետները նույնպես կարող են լուրջ նպաստ բերել այդ ասպարեզում: Եվ պատահական չէ, որ մեծամասնություն կազմող հումանիտար ոլորտի մասնագետների կողքին գիտավերլուծական հանրության մեջ ակտիվ գործունեություն են ծավալում նաև բնագիտական ոլորտի մասնագետները:

¹Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին (30.04.2009 N 459-ն), <https://www.e-gov.am/gov-decrees/item/16059/>

Ինչ վերաբերում է հայկական Մփյուռքին, ապա այստեղ առկա են արտերկրի ակադեմիական կառույցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող մասնագետներ, որոնք կազմում են հայկական գիտավերլուծական հանրությունը Մփյուռքում: Վերջինիս հետ համագործակցությունը և նրա ներգրավումը համազգային խնդիրների լուծման գործին էական օգուտներ կարող են բերել Հայաստանին և Մփյուռքին:

Մույն աշխատության գլխավոր նպատակն է Մփյուռքի գիտավերլուծական հանրության ներուժի բացահայտումը և գիտավերլուծական աշխատանքի բնագավառում Հայրենիք-Մփյուռք համակարգված փոխգործակցության ուղիների և ձևաչափերի մշակումը:

Նշենք, որ գիտավերլուծական գործունեության բնագավառում Հայրենիք-Մփյուռք համագործակցության ուղղությամբ իրականացվել են որոշակի գործնական քայլեր: Դրանցից, առաջին հերթին, կարևոր ենք համարում հիշատակել 2012թ. նոյեմբերին Երևանում ՀՀ Մփյուռքի նախարարության, ԵՊՀ-ի և «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից կազմակերպված «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագիրը կրող Քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողովը, որը մեծ նշանակություն ունեցավ Մփյուռքի գիտավերլուծական հանրության մի շարք ներկայացուցիչների հետ ծանոթանալու և նրանց հետ մասնագիտական հարաբերություններ հաստատելու տեսանկյունից:

Գիտավերլուծական աշխատանքում Հայրենիք-Մփյուռք համագործակցության խթանմանն էր ուղղված նաև Մփյուռքի

մտավորականների ներգրավումը «Նորավանք» ԳԿՀ գործունեության մեջ: Այս տեսակետից հիշարժան են Սփյուռքի մտավորականների մասնակցությամբ հիմնադրամում կազմակերպված դասախոսություններն ու աշխատաժողովները, որոնց ընթացքում արտերկրի մեր հայրենակիցները հանդես են եկել զեկույցներով ու ելույթներով:

Մույն հետազոտության հիմնական մեթոդաբանությունը կազմել են համացանցից և այլ աղբյուրներից արտերկրի ակադեմիական կառույցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող ազգությամբ հայ գիտնականների և փորձագետների մասին տեղեկատվության հավաքումը և համակարգումը, նրանց մասին տվյալների շտեմարանի ձևավորումը, ստացված տվյալների վերլուծությունը, տարբեր չափանիշներով (ըստ մասնագիտությունների, գիտական աստիճանների և այլն) հայ գիտնականների և փորձագետների դասակարգումը, գիտավերլուծական գործունեության կազմակերպման և այս ասպարեզում համագործակցության վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը և այլն: Ակնհայտ է, սակայն, որ սույն հետազոտության արդյունքները չեն կարող հավակնել սպառիչ լինելուն, քանի որ հնարավոր չէ մեկ աշխատության մեջ ներկայացնել Սփյուռքի ողջ գիտավերլուծական ներուժը:

Առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցի հետ կապված ներկա իրավիճակին և խնդիրներին: Երկրորդ գլուխը նվիրված է արտերկրի հայկական գիտավերլուծական հանրության ներուժի բացահայտմանը: Երրորդ գլուխը նվիրված է գիտավերլուծական

աշխատանքի բնագավառում Հայաստան-Սփյուռք փոխգործակցության ուղիների և ձևաչափերի վերհանմանը:

Վերջում ցանկանում ենք շնորհակալություն հայտնել մեզ հետ պատրաստակամորեն համագործակցած՝ Սփյուռքի մեր գործընկերներ Տիգրան Եկալյանին, Միհրան Դաբաղին և այլոց, որոնց տրամադրած տեղեկատվությունը և խորհրդատվությունը խիստ արժեքավոր նշանակություն ունեցան աշխատանքի կայացման համար:

ԳԼՈՒԽ 1

ՄՓՅՈՒՌՔԻ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արդի ժամանակաշրջանում ազգային-քաղաքակրթական և պետական համակարգերի անվտանգությունը, արդյունավետությունն ու մրցունակությունը պայմանավորված են այդ համակարգերի ունեցած մտավոր ռեսուրսների քանակով, որակով, դրանք կազմակերպելու և իրենց շահերին համապատասխան նպատակաուղղված կիրառելու ունակությամբ: Հայտնի է նաև, որ բացի ավանդական գիտակրթական կառույցներից, ակադեմիական բնույթի ինստիտուտներից և բուհական հաստատություններից, մտավոր ռեսուրսների կազմակերպման կարևոր ձևաչափ են հանդիսանում հատուկ հետազոտական կենտրոնները: Նման կառույցները տեղեկատվական դաշտում ընդունված է անվանել «ուղեղային կենտրոններ» (ՈւԿ): Հատկանշական է, որ Արևմուտքում ՈւԿ-ներն ավելի հաճախ կոչվում են «մտքի ֆաբրիկաներ», «ազգային շահ արտադրող» կամ «գաղափարախոսություն ստեղծող» կազմակերպություններ՝ այդպիսով ստանալով ավելի դինամիկ իմաստ: Բնորոշ է նաև, որ կայացած ՈւԿ-ների կառուցվածքում հաճախ տեղ են գտնում նաև կրթական կենտրոններ, որոնց նպատակն է ազգային ընտրանին համալրել ստեղծագործ և մասնագիտորեն լավ պատրաստված կադրերով:

Աշխարհի առաջատար երկրներում պետական քաղաքականություն իրականացնող մարմինները, կուսակցությունները և այլ քաղաքական ակտորները, իրենց գործնական քաղաքականությունն իրականացնելիս, հիմնվում են ակադեմիական կառույցների, ինչպես նաև վերլուծական կամ «ուղեղային կենտրոնների» իրականացրած մշակումների ու վերլուծությունների վրա: Այլ կերպ ասած՝ գիտական և փորձագիտական հանրության մտավոր արտադրանքը հաճախ պայմանավորում է իշխանությունների ընդունած որոշումների բնույթն ու բովանդակությունը: Այս տեսանկյունից դժվար է գերազնահատել մտավոր ներուժի ազդեցությունը գործնական քաղաքականության վրա:

Դասական ՈւԿ-ների (որպես այդպիսին ավանդաբար ընդունված է համարել Երկրորդ համաշխարհայինից հետո ստեղծված և իրենց հանրությունում արդեն ինստիտուցիոնալ կարգավիճակ ձեռք բերած ՈւԿ-ները) խնդիրն է ազգային անվտանգության (ԱԱ) համատեքստում նորարարական գաղափարներ, հեռանկարային նախագծեր, հայեցակարգեր, տարաբնույթ ռազմավարական–մարտավարական մշակումներ, փորձագիտական խորհրդատվություններ տրամադրել պետական–քաղաքական (հաճախ՝ նաև հոգևոր) կառույցներին և ազգային ուղղվածություն ունեցող կապիտալը ներկայացնող ընկերություններին¹: Օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ-ին են պատկանում «տեղեկատվական պատերազմ», «ցանցակենտրոն–տեղեկատվական համակարգ» հասկացությունների ձևավորումը, դրանց հետագա հայեցակարգային կատարելագործումը և կիրառա-

¹ *Арутюнян Г.*, Распад системы и формирование будущего. Ереван, 2011.

կան տեխնոլոգիաների վերածումը: Համարվում է, որ նաև նման մշակումների շնորհիվ է, որ Միացյալ Նահանգներն առաջատար դիրքեր է գրավում գլոբալ հարթությունում:

ՈւԿ-ների արդյունավետ գործունեությունը հնարավոր է միայն այն հանրություններում, որտեղ առկա են, մասնավորապես, հետևյալ պայմանները.

1. Պետական-քաղաքական և տնտեսական համակարգում ԱԱ համատեքստում մտավոր ռեսուրսների գործոնի կարևորության ըմբռնումը, այդ ոլորտին անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու կամքը և կարողությունը¹,
2. պետական-քաղաքական համակարգի կողմից ՈւԿ-ների գործունեությունն ազգային շահերի համաձայն ուղղորդելը², ինչպես նաև ՈւԿ-ներից ստացված արդյունքները գործնական հարթությունում կիրառելու՝ այդ համակարգի կազմակերպչական ունակությունը,
3. ՈւԿ-ները սնուցող համապատասխան ակադեմիական և բուհական միջավայրի առկայությունը,
4. ՈւԿ-պետություն, ազգային կապիտալ-ակադեմիական և բուհական գիտություն օղակների փոխհարաբերություններն ապահովող արդյունավետ մեխանիզմների առկայությունը:

¹Դա չի բացառում, որ որոշ ՈւԿ-ներ կայացման և զարգացման որոշակի փուլում իրենց ինովացիոն մշակումների հիման վրա սկսում են իրագործել նաև կոմերցիոն նախագծեր կամ նման նախագծերի համար ստեղծում են համապատասխան մասնաճյուղեր կամ ընկերություններ: Մասնավորապես, շրջանառության մեջ գտնվող համակարգչային «ռազմավարական խաղերի» մի մասը նման գործունեության արդյունք է:

²Հատկանշական է, որ վերլուծաբանական գրականությունում կարելի է հանդիպել այն տեսակետին, թե որոշ երկրների ՈւԿ-ներին այսօր հատուկ են նաև կորպորատիվ շահեր, որոնք որոշ պարագաներում կարող են ավելի գերադասվել, քան ազգային շահերը:

Որպես կանոն, տվյալ պետության ՈւԿ-ներն ունեն ցանցային բնութագիր և գործում են փոխլրացման սկզբունքների համաձայն: Նման համագործակցությունը խիստ արդյունավետ է և հաճախ հանգեցնում է սիներգետիկ էֆեկտների: Նկատենք, որ ՈւԿ-ների համակարգի ստեղծումն աշխատատար և երկարատև գործընթաց է. այն պահանջում է համապատասխան «դպրոցների» և ավանդույթների ձևավորում, կրեատիվ կադրերի պատրաստման տարաբնույթ մեթոդիկաների կիրառում (օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիան շնորհալի հետազոտողների «բացահայտումը» նախընտրում է սկսել դպրոցներից) ու, թերևս ամենակարևորը, հանրության կողմից նման ՈւԿ-ների անհրաժեշտության գիտակցություն:

Պետք է նաև ամրագրել, որ ՈւԿ-ների համակարգը հիմնվել և առավել զարգացած ու ինստիտուցիոնալ բնույթ է ընդունել Միացյալ Նահանգներում: Միննույն ժամանակ, այսօր գրեթե բոլոր կայացած երկրներում հիմնվել են նմանատիպ կառույցներ, որոնք ունեն իրենց հանրություններին բնորոշ առանձնահատկություններ: Համաձայն փորձագիտական մոտեցումների, ՈւԿ-ների համակարգի կայացածությունը տվյալ հանրության ԱԱ կարևորագույն ցուցիչներից է: Եթե անգամ նման պնդումը դիտարկենք ֆորմալ տեսանկյունից, ապա այն արդարացված է. մտավոր ռեսուրսները տեղեկատվական անվտանգության (SU) գլխավոր բաղադրիչներից են, իսկ SU գործոնի անտեսումը տեղեկատվական դարաշրջանում խիստ խոցելի է դարձնում ցանկացած հանրության ԱԱ համակարգը:

Նպատակ ունենալով դիտարկել հայկական մտավոր ռեսուրսների կազմակերպման խնդիրները՝ հնարավոր չէ չանդրա-

դառնալ խորհրդային գիտական համակարգին, որի մասն էին կազմում ՀՀ-ում գործող հետազոտական կառույցները: ԽՍՀՄ-ում գործում էին մի շարք կազմակերպություններ, որոնք, կրելով խորհրդային համակարգին բնորոշ յուրահատկությունները, այս կամ այն չափով իրագործում էին ՈւԿ-ներին բնորոշ գործունեություն: Որոշ պարագաներում նման կառույցները ներկայացնում էին ակադեմիական ինստիտուտներ. այդպիսին է, օրինակ, Ռուսաստանի ԳԱ ԱՄՆ և Կանադայի ինստիտուտը, որը հաջողությամբ գործում է առայսօր: Այդօրինակ ՈւԿ-ները, գլխավորապես տեղակայված լինելով Մոսկվայում, անմիջականորեն սպասարկում էին տերության քաղաքական ղեկավարությանը՝ «կենտրոնին», որը բացարձակ մենասեր էր արտաքին և ներքին քաղաքականության ոլորտում: Միութենական հանրապետությունների ղեկավարությունն ընդամենը կատարում էր «կենտրոնի» դիրեկտիվները և ՈւԿ-ների կարիքը չունեի և, անգամ ցանկության ու կարիքի պարագայում, թերևս, չէր էլ կարող ունենալ նման կառույցներ: Այդպիսով՝ ՈւԿ-ների տիպի կառույցների ստեղծման և գործունեության կազմակերպման մշակույթը, բացառությամբ սակավաթիվ ղեկավարի, միութենական հանրապետություններում, դրանց թվում՝ Հայաստանում, չէր ձևավորվում¹: Այդ համատեքստում առանձնահատուկ տեղ էին գրավում ուսումնասիրությունները հայկական Սփյուռքի ուղղությամբ, որի կարևորությունը «կենտրոնն» ըմբռնում էր, և, բնականորեն, ոլորտի «պատվերները» Երևանին էին «իջեցվում»:

¹ Հարկ է նշել, որ իրադրությունն այլ էր, օրինակ, բնագիտության ոլորտում, որտեղ առանձին անհատների և ազգային հատկանիշների շնորհիվ, Երկրորդ հանրապետությունում գործում էին համամիութենական, իսկ երբեմն անգամ՝ համաշխարհային մակարդակի առաջատար գիտական կենտրոններ:

ԽՄՀՄ փլուզմանը զուգընթաց, կազմալուծվեց նաև խորհրդային գիտական համակարգը: Բավական է նշել, որ Երրորդ հանրապետությունում այսօր գիտությանը հատկացվում է \$20-30 մլն, մինչդեռ նախորդ դարի 80-ականներին ոլորտի ֆինանսավորումը կազմում էր շուրջ \$600 մլն¹: Միննույն ժամանակ, այսօր հանրապետությունում գործում են ՈւԿ-ների տիպի ավելի քան 30 հաստատություններ, որոնք, սակայն, պատվերներ և համապատասխան նյութական աջակցություն ստանում են այլ երկրներից և միջազգային կազմակերպություններից: Նման հաստատությունների աշխատանքները նպատակաուղղված են դեպի իրենց պատվիրատուները և, այսպիսով, միշտ չէ, որ կարող են սպասարկել մեր ազգային շահերը: Սակայն դա չի նշանակում, թե պետք է անտեսել այդ կենտրոնների գործունեությունը և չփորձել օգտագործել դրանք հանուն մեր պետական շահերի. դա հատկապես վերաբերում է սոցիոլոգիական և տնտեսագիտական ոլորտի հետազոտություններին, որոնց արդյունքների համալիր վերլուծությունը պետք է որ օգտակար լինի: Այլ խնդիր է, որ այդ արդյունքները միշտ չէ, որ հասանալի են հանրությանը:

¹ Միննույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ անգամ այդ սուղ միջոցները, մասնավորապես՝ հումանիտար ոլորտում, միշտ չէ, որ նպատակաուղղված են տնօրինվում: Երբեմն ֆինանսավորվում են հետազոտություններ, որոնք հրատապ չեն և նույնիսկ մարզինալ բնույթ են կրում, իսկ սփռված Հայության հիմնախնդիրների հետազոտություններն անտեսվել են և միայն վերջերս են սկսել վերականգնվել՝ շնորհիվ նորաստեղծ Սփյուռքի նախարարության ջանքերի: Հատկանշական է նաև, որ չնայած ֆինանսավորման ծավալների նվազմանը, բնավ չի պակասել գիտական կոչումներ ստացողների թիվը. այդ գործընթացն այսօր ակնհայտորեն այլ, ոչ գիտական իմաստավորում է ստացել:

2000 թվականից, երբ հանրապետության տնտեսությունը սկսեց վերականգնվել, իշխանության որոշ օղակների և ընտրանու առանձին ներկայացուցիչների նախաձեռնությամբ հիմնվեցին նաև ազգային պատվերներ կատարող ՈւԿ-ներ: Նշենք, որ դրանց գործունեության սկզբնական փուլում կային բազմաթիվ անբարենպաստ գործոններ, որոնցից են.

1. պետական-ազգային-քաղաքական մարմինների, ինչպես նաև բիզնես կառույցների թերահավատությունը մտավոր, հատկապես՝ հայրենական¹ մտավոր «արտադրանքի» նկատմամբ,
2. ազգային գիտության անբավարար վիճակը, հատկապես ԱԱ տեսանկյունից հրատապ ոլորտներում, ինչն իր հերթին պայմանավորում է վերլուծաբանական հանրության ոչ այնքան բավարար մակարդակը,
3. ՈւԿ կառույցների ձևավորման և ղեկավարման մշակույթի ընդհանուր պակասը քաղաքական էլիտայում և փորձագիտական հանրությունում:

Ներկայումս իրավիճակը մասամբ բարելավվել է, չնայած որոշ անբարենպաստ հանգամանքներ (հատկապես ազգային գիտության անմխիթար կարգավիճակը) շարունակական բնույթ են կրում: Միննույն ժամանակ, արձանագրված առաջխաղացումը դեռևս դժվար է բավարար համարել: Եղած հիմնախնդիրներից առանձնացնենք հետևյալները.

¹Նման իրողությունը փորձագիտական հանրությունում ընդունված է որակել որպես «ներմուծողի» հոգեբանության արտահայտություն: Սակայն Հայության պարագայում այդօրինակ թերահավատությունը բնորոշ է նաև Սփյուռքի ազգային և տնտեսական կառույցների ներկայացուցիչներին:

- ՈւԿ-ների մշակումների արդյունքները, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, էական ազդեցություն չեն գործում պետական-քաղաքական էլիտայի ու հասարակության գործունեության վրա, այսինքն՝ հայրենական ՈւԿ-ները դեռևս չեն վերածվել ինստիտուցիոնալ կառույցների,
- ՀՀ-ում գործող ՈւԿ-ների թեմատիկ ուղղվածությունն ազգային շահերի համատեքստում երբեմն օպտիմալ չէ, նրանց ընդհանրական գործունեությունը դժվար է անվանել համակարգված: Չնայած իրենց սակավությանը՝ ՀՀ ՈւԿ-ները միմյանց հետ անբավարար են համագործակցում, իսկ ցանցային աշխատատեղեր դեռևս չի ձևավորվել,
- ԱԱ համատեքստում իրագործվող տեսական-գործնական մշակումների արդյունավետությունն այսօր պայմանավորված է տարաբնույթ մեթոդների յուրացման և կիրառման հնարավորությունով, մինչդեռ դրանց ձեռքբերումը և համապատասխան կադրերի պատրաստումը խիստ ծախսատար գործընթացներ են, որոնց համար միշտ չէ, որ հնարավոր է ստանալ պետական աջակցություն,
- ազգային կապիտալի ներկայացուցիչների մի զգալի մասում դեռևս չի ձևավորվել ՈւԿ-ների անհրաժեշտության և կարևորության գիտակցությունը:

Հայության մտավոր ռեսուրսների մի զգալի մասն էլ գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս: Բնակվելով աշխարհի տարբեր, այդ թվում նաև առաջատար երկրներում՝ հայազգի մտավորականության ներկայացուցիչներն ընդգրկված են այդ երկրների գիտական և վերլուծական կառույցների գործու-

նեության մեջ: Նրանք կարևոր դերակատարում ունեն ԱՄՆ, Ռուսաստանի, Եվրոպական և այլ երկրների հետազոտական ու ակադեմիական կառույցներում, ինչպես նաև գործնական քաղաքականության վրա անմիջական ազդեցություն ունեցող վերլուծական կառույցներում՝ «ուղեղային կենտրոններում»:

Նրանցից շատերը զգալի հաջողությունների են հասել. օրինակ, կարելի է նշել ԱՄՆ Քարնեգիի հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորյանին, Բարուխի քոլեջի դեկան Երվանդ Աբրահամյանին, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) պրոֆեսոր Տարոն Աջեմոլլուին, Գերմանիայի Բոխում քաղաքի Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Միհրան Դաբաղին, ՌԴ ԳԱ Համաշխարհային պատմության ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Չուբարյանին և այլոց: Արտերկրի հայության մտավոր ներուժը (թե՛ ակադեմիական և թե՛ փորձագիտական ոլորտներում), արդյունավետ օգտագործվելու պարագայում, կարող է զգալի օգուտներ բերել թե՛ Հայաստանին, թե՛ Սփյուռքին: Լինելով աշխարհի առաջատար տերությունների գիտական և փորձագիտական հանրությունների մի մասը՝

- նրանք ավելի լավ են տեղեկացված իրենց երկրներում տիրող քաղաքական իրավիճակին, ներքին և արտաքին քաղաքական գործընթացներին և դրանց միտումներին, իշխանությունների և ընդդիմության տրամադրություններին և այլն, ինչը, եթե ոչ անմիջականորեն, ապա միջնորդավորված կերպով անդրադառնում է մեր տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակի, այդ թվում նաև Հայաստանի տարածաշրջանային դրության վրա,

- նրանցից շատերը համաշխարհային գործընթացներից, աշխարհի այս կամ այն տարածաշրջանում կամ երկրում տեղի ունեցող կամ սպասվելիք իրադարձություններից տեղեկացված լինելու շատ ավելի լայն հնարավորություններ և հասանելիություն ունեն, քան հայաստանյան գիտական կամ փորձագիտական շրջանակները, իսկ գլոբալացման ներկա պայմաններում աշխարհի տարբեր կետերում տեղի ունեցող իրադարձությունները, համաշխարհային գործընթացները՝ առավել ևս, չեն կարող չազդել նաև ՀՀ քաղաքական, տնտեսական դրության վրա,
- սփյուռքահայ գիտնականներն ու փորձագետներն իրենց երկրների գիտական և փորձագիտական մշակույթի ու փորձի (ամերիկյան, ռուսական, եվրոպական և այլն) կրողներն են, ինչի փոխառումը կամ ներմուծումը Հայաստան կարող է զգալիորեն հարստացնել տեղի գիտական և փորձագիտական մշակույթն ու փորձը՝ էապես մեծացնելով հայաստանյան նոր ձևավորվող փորձագիտական դպրոցի մտավոր կարողությունները:

Սփյուռքի մտավոր ներուժի արդյունավետ օգտագործումն ի նպաստ ազգային շահերի ենթադրում է այդ ներուժի հետ որոշակի աշխատանքի ծավալում՝ հիմնված մանրամասն հետազոտությունների և վերլուծությունների վրա: Այստեղ կարևոր են երկու առանցքային քայլեր.

1. *Ներուժի հաշվառում*, որի նպատակն է հստակ պատկերացում կազմել Սփյուռքում առկա հայկական գիտավերլուծական հանրության, նրա մտավոր կարողությունների մասին:

2. Արդյունավետ օգտագործման մեխանիզմների մշակում, որի նպատակը Մփյուռքի հայկական գիտական և փորձագիտական հանրության ներուժն առավելագույնս ազգային շահերին ծառայեցնելն է: Խնդիրը ենթադրում է տարբեր երկրներում, կառույցներում և մասնագիտական ոլորտներում ընդգրկված անհատ հայ գիտնականներին և փորձագետներին մեկ միասնական «հարկի» տակ համախմբելու, նրանց միջև, ինչպես նաև Հայաստանի գիտական և փորձագիտական հանրության հետ տարբեր ձևաչափերով կապերի և համագործակցության հաստատման ու ամրապնդման ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ մեխանիզմների մշակում: Պետք է նշել, որ հայ իրականության մեջ կատարվել են որոշակի հետազոտություններ արտերկրի հայկական մտավոր ներուժի հաշվառման ուղղությամբ¹: Մակայն համապարփակ ուսումնասիրություն այս ուղղությամբ առայսօր դեռևս իրականացված չէ:

Եթե գիտական շրջանակներում ընդգրկված մեր հայրենակիցների հաշվառման ուղղությամբ, թեկուզ ոչ համապարփակ, բայց որոշակի հետազոտություններ այս կամ այն չափով արվել են, ապա փորձագիտական շրջանակներում ընդգրկված հայկական մտավոր ներուժի բացահայտման գործը դեռևս, կարելի է ասել, լիովին բաց է: Բաց է նաև այդ ներուժն առավել արդյունա-

¹ Տե՛ս, օրինակ, «Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում» հետազոտությունը (Երևան, 2010թ.), ԳՊԿ-ի կողմից ստեղծված՝ արտերկրի հայ գիտնականների վերաբերյալ տվյալների բազան, http://scs.am/uploads/Gitakan_qaxaqakanutyun/otarerarkrya_hay_gitnakanner.pdf:

վետությամբ Հայաստանի և Հայության շահերին ծառայեցնելու մեխանիզմների վերհանման գործը:

Հայաստանը մշտապես վարել է Հայրենիքի հովանու ներքո Հայության մտավոր ներուժի համախմբման և այն ազգային շահերին ծառայեցնելու քաղաքականություն: Այդ նպատակով են թե՛ Առաջին և թե՛ Երկրորդ հանրապետություններում կազմակերպվել արտերկրում բնակվող հայկական մտավոր, քաղաքական, զինվորական և այլ շրջանակների ներկայացուցիչների «հայրենադարձության» ծրագրեր: Օրինակ, 1920-ական թթ. Ալ.Մյասնիկյանի կողմից իրականացված արտերկրի հայկական մտավորական ռեսուրսների մի մասի վերադարձը նորաստեղծ Խորհրդային Հայաստան և նրանց մեծ ավանդը վերջինիս զարգացման գործում՝ այդ քաղաքականության ամենավառ դրսևորումներից են:

Մեր օրերում համաշխարհային նոր իրողությունները ենթադրում են Հայության ներուժի համախմբման ավանդական ձևերին ու եղանակներին ավելացնել նորերը: Տեղեկատվական և հեռահաղորդակցային միջոցների զարգացմամբ պայմանավորված՝ ցանցային կառույցների հետզհետե աճող դերը հանրային կյանքում հարկադրում է Հայաստանի Երրորդ Հանրապետության պատկան մարմիններին գործնական կյանքում կիրառել Սփյուռքի ներուժի համախմբման և արդյունավետ օգտագործման համապատասխան մեխանիզմներ:

Արտերկրի գիտավերլուծական կառույցներում ընդգրկված հայ փորձագետների հետ համագործակցությունը հիմնականում իրականացվում է առանձին անհատների, պետական և

ոչ պետական կազմակերպությունների (ՀԿ-ներ և այլն) նախա-
ձեռնությամբ, ինչը շատ փոքր տոկոս է կազմում: Մինչդեռ հա-
մակարգված մոտեցման դեպքում հնարավոր է այդ հանրային
հետ ձևավորել ընդհանուր աշխատանքային պլատֆորմ՝ համա-
գործակցության ավելի լայն ու սահուն մեխանիզմներով: Սույն
հանգամանքը հրատապ է դարձնում արտերկրի հայ գիտա-
վերլուծական ներուժի հաշվառման խնդիրը, որի լուծումը
ենթադրում է հետևյալ քայլերը.

- *Միջուռքի ակադեմիական և փորձագիտական ռեսուրսնե-
րի բացահայտում:* Այս ոլորտում իրականացվող առաջա-
դրանքն է՝ հայտնաբերել հումանիտար գիտությունների
ասպարեզում արտերկրի ակադեմիական և վերլուծական
կառույցներում ընդգրկված հայ մասնագետներին՝ քաղա-
քագետներ, սոցիոլոգներ, տնտեսագետներ, իրավաբան-
ներ, պատմաբաններ և այլն:
- *Հումանիտար ոլորտում Միջուռքի ակադեմիական և վեր-
լուծաբանական ներուժի գնահատում:* Սա ենթադրում է
հայ մասնագետների տվյալների բազայի ստեղծում, նրանց
դասակարգում՝ ըստ գիտական աստիճանների, մասնագի-
տական ձեռքբերումների, երկրների, մասնագիտություն-
ների, ակադեմիական և վերլուծական կառույցների և այլն:

ԳԼՈՒԽ 2 ՍՓՅՈՒՈՔԻ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԱՐԴԻ ՊԱՏԿԵՐԸ

2.1 Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունը

Ռուսաստանի հայ համայնքը հայկական Սփյուռքի ամենահին և ամենաստվար համայնքներից է: Համաձայն ոչ պաշտոնական տվյալների, այստեղ բնակվող հայերի թիվը կազմում է մոտ 2.5 մլն մարդ: Միաժամանակ, Ռուսաստանի հայ համայնքի բնորոշ գծերից մեկը նրա խոր ինտեգրվածությունն է ռուսաստանյան հասարակությունում:

Ռուսաստանի հայ համայնքի ստվարաթվության, ինչպես նաև այնտեղի հասարակության մեջ նրա խոր ինտեգրվածության հիմքում ընկած են մի շարք օբյեկտիվ գործոններ, որոնցից առաջինների թվում կարելի է հիշատակել այն հանգամանքը, որ դեռևս ոչ վաղ անցյալում երկու երկրները (Հայաստանը և Ռուսաստանը) գտնվել են մեկ պետական կազմավորման՝ Ռուսական կայսրության, ապա՝ Խորհրդային Միության կազմում: Այս հանգամանքն ակտիվացրել է բնակչության տեղաշարժը երկու երկրների, ինչպես նաև քաղաքակրթական և մշակութային մերձեցումը հայ և ռուս ժողովուրդների միջև: Հայերի՝ ռուսերենի իմացության բարձր մակարդակն էապես դյուրինացրել է երկու ժողովուրդների փոխադարձ շփումները:

Հետխորհրդային շրջանում ևս նախկին հարաբերությունների ավանդույթը, հայերի մեծ հոսքը դեպի Ռուսաստան (ինչպես արտագնա աշխատանքի, այնպես էլ տնական բնակության նպատակով), ինչպես նաև հետխորհրդային երկրների միջև տարատեսակ ինտեգրացիոն նախագծերը (ԱՊՀ և այլն), որոնց մասնակից է եղել նաև Հայաստանը, թույլ տվեցին պահպանել և նոր լիցք հաղորդել նախկին հարաբերություններին, ինչն էլ, իր հերթին, նպաստավոր պայմաններ ստեղծեց Ռուսաստանի հայ համայնքի պահպանման և ծաղկման համար:

Ռուսաստանյան հասարակության մեջ հայ համայնքի ինտեգրվածության ցուցիչն է հայերի բարձր դիրքերի հասնելն այդ երկրում: Հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում (գիտություն, քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, ռազմական գործ և այլն) ռուսաստանաբնակ հայերն ունեցել են ականավոր ներկայացուցիչներ, ինչը հիմք է տվել մասնագետներին հայերին դասելու Ռուսաստանի պետականակերտ ազգերի շարքում:

Պետք է նշել, որ Ռուսաստանում բարձր դիրքերի հասած հայերի զգալի մասը ոչ միայն նպաստել է այդ երկրի շենացմանը, այլև, անհրաժեշտության դեպքում, պատրաստակամորեն իր ծառայություններն է մատուցել նաև Մայր հայրենիքին: Բավական է հիշել միայն խորհրդային բանակի սպայակազմի հայազգի ներկայացուցիչներ Նորատ Տեր-Գրիգորյանցի, Գուրգեն Դալիբալթայանի, Քրիստավոր Իվանյանի և այլոց ներդրումը նորանկախ Հայաստանի պաշտպանության կազմակերպման, բանակաշինության և դարաբաղյան պատերազմում տարած հաղթանակի գործում: Անուրանալի է նաև Ռուսաստանում հա-

ջողությունների հասած հայազգի գործարարների նպաստը Հայրենիքի շենացման գործին ինչպես տնտեսական ներդրումների, այնպես էլ բարեգործության միջոցով:

Մեզ հետաքրքրող գիտության հումանիտար ոլորտը նույնպես աչքի է ընկնում Ռուսաստանի հայ համայնքի ակտիվ ներկայացվածությամբ: Այս ասպարեզում նույնպես կան մեծաթիվ հայեր, որոնք կարող են կազմել Ռուսաստանի հայության գիտա-փորձագիտական հանրությունը կամ գիտավերլուծական ներուժը: Խոսքը Ռուսաստանի գիտական և վերլուծական կառույցների աշխատանքներում ընդգրկված այն հայ գիտնականների և վերլուծաբանների մասին է, որոնց մտավոր գործունեությունն, արդյունավետ համագործակցության դեպքում, կարող է կիրառական նշանակություն ունենալ համազգային խնդիրների լուծման տեսակետից:

Ռուսաստանի հայ համայնքի գիտա-փորձագիտական հանրությունը ներկայացնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ հայերի ներկայացվածությանն այդ երկրի գիտական և փորձագիտական կառույցների գործունեության մեջ:

Գիտության հումանիտար ճյուղերը ներկայացնող ռուսաստանաբնակ հայերը՝ չնայած գիտական կառույցներում քանակական գերակշռությանը, ընդգրկված չեն միայն կամ գերակշռաբար ակադեմիական հետազոտություններում՝ զերծ մնալով կիրառական բնույթի աշխատանքներից: Նախ՝ ժամանակակից աշխարհում տեղի է ունենում ակադեմիական և կիրառական գիտությունների մերձեցում: Աստիճանաբար ջնջվում են սահմանները կիրառական և ակադեմիական հետազոտություն-

ների միջև, քանի որ դրանք դառնում են մեկ համակարգի անբաժանելի մասեր՝ փոխալայմանավորելով միմյանց: Ակադեմիական հետազոտությունների արդյունքները ներդրվում և օգտագործվում են կիրառական հետազոտությունների բնագավառում, իսկ կիրառական հետազոտությունների արդյունքները հակադարձ կապի միջոցով հիմք են հանդիսանում տեսական-ակադեմիական մշակումների համար:

Ակնհայտ է նաև, որ պետական կառավարման մարմիններին առընթեր գործող գիտական կառույցները չեն կարող լինել գուտ ակադեմիական հետազոտություններով զբաղվող հաստատություններ: Դրանց առաքելությունը, բացի ակադեմիական հետազոտություններից, նաև պետական կառավարման մարմինների համար կադրեր պատրաստելն է, ինչպես նաև տարատեսակ հետազոտությունների, վերլուծությունների, մշակումների միջոցով վերջիններիս գործունեության ինտելեկտուալ ապահովումը: Սույն հանգամանքը հույժ կիրառական է դարձնում հիշյալ կառույցների գործունեությունը՝ մեկ անգամ ևս փաստելով ակադեմիական և կիրառական գիտությունների մերձեցման մասին:

Ռուսաստանի հայության գիտավերլուծական ներուժը նպատակահարմար է ներկայացնել մի քանի չափորոշիչներով: Խոսքը վերաբերում է գիտավերլուծական գործունեության մեջ ընդգրկված մեր հայրենակիցների մասնագիտություններին (թե ինչ համամասնություն ունեն առանձին մասնագիտությունների ներկայացուցիչները՝ տնտեսագետները, քաղաքագետները, սոցիոլոգները, պատմաբանները և այլն), գիտական աստիճաններին և այլն:

Աշխատանքում հաշվարկվել է ռուսաստանյան գիտավերլուծական գործունեության մեջ ներգրավված ավելի քան 200 հայ մասնագետ: Պարզ է, որ Ռուսաստանում գիտական և փորձագիտական գործունեությամբ զբաղվող հայերի թիվն անհամեմատ ավելին է, և ոչ մի գիտական հետազոտություն չի կարող սպառիչ կերպով ցույց տալ այդ մարդկանց իրական թվաքանակը: Հետևաբար, մեր ներկայացրած տվյալները նույնպես չեն կարող հավակնել սպառիչ լինելու և վերաբերում են միայն հետազոտության շրջանակներում հաշվառված և ուսումնասիրված մարդկանց: Այնուամենայնիվ, դրանք թեկուզ մոտավոր կերպով կարող են որոշակի լույս սփռել Ռուսաստանի հայ համայնքի գիտավերլուծական հանրության և նրա ներուժի վրա:

Բնագիտական ոլորտը Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունում ներկայացված է 8 մասնագիտություններով: Դրանք են՝ ճարտարագիտությունը, ֆիզմաթ գիտությունները, քիմիան, աշխարհագրությունը, երկրաբանությունը, էլեկտրատեխնիկան, կենսաբանությունը և շինարարությունը: Հինգ մասնագիտությունների գծով՝ աշխարհագրություն, երկրաբանություն, էլեկտրատեխնիկա, կենսաբանություն և շինարարություն, առկա են մեկական ներկայացուցիչներ: Բնական գիտությունների ոլորտում գերակշռում են ճարտարագետները և ֆիզմաթ գիտությունների ներկայացուցիչները: Ճարտարագետների թիվը Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրության շրջանակներում կազմում է 13: Նրանք, փաստորեն, քանակապես և, հետևաբար, տեսակարար կշռով գտնվում են առաջին տեղում՝ կազմելով բնագիտական մասնագիտություն-

ներ ունեցողների գրեթե կեսը: Երկրորդ տեղում են ֆիզմաթ գիտությունների (8 մարդ), երրորդում՝ քիմիայի (2 մարդ) ներկայացուցիչները (տե՛ս *Աղյուսակ 1*).

Աղյուսակ 1

Բնագիտական մասնագիտություններ ունեցողների թիվը Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունում

	Մասնագիտությունը	Թիվը
1	Ճարտարագիտություն	13
2	Ֆիզիկա-մաթեմատիկական գիտություններ	8
3	քիմիա	2
4	աշխարհագրություն	1
5	երկրաբանություն	1
6	Էլեկտրատեխնիկա	1
7	կենսաբանություն	1
8	շինարարություն	1

Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունը հումանիտար ոլորտում ներկայացված է հետևյալ 9 մասնագիտություններով¹.

- *Բանասիրություն և մանկավարժություն*²
- *Իրավաբանություն*
- *Հոգեբանություն*
- *Մշակութաբանություն*
- *Պատմություն*
- *Սոցիոլոգիա*

¹ Ցանկը ներկայացված է այբբենական կարգով:

² Քանի որ մանկավարժներից շատերն ունեն բանասիրական կրթություն, նպատակահարմար է այդ երկու մասնագիտությունները դիտարկել միասին:

- *Տնտեսագիտություն*
- *Փիլիսոփայություն*
- *Քաղաքագիտություն:*

Հումանիտար ոլորտը կազմող վերոհիշյալ 9 մասնագիտությունները Ռուսաստանի հայկական գիտավերլուծական հանրության շրջանում, ըստ տեսակարար կշռի, ունեն ներկայացվածության տարբեր աստիճաններ, ինչը նպատակահարմար է դարձնում դրանք բաժանել երկու խմբի՝ առավել տարածվածներ և պակաս տարածվածներ:

Առավել տարածվածների շարքին են դասվում այն մասնագիտությունները, որոնց տիրապետողների թվաքանակը գերազանցում է մեկ տասնյակը: Նշենք, որ թվարկված 9 մասնագիտությունների գերակշիռ մեծամասնությունը՝ 7-ը, պատկանում է հենց այս խմբին: Տարածվածության տեսակետից առաջին տեղում է տնտեսագիտությունը. տնտեսագետ են Ռուսաստանի հայկական գիտավերլուծական հանրությունը ներկայացնող 48 անձինք: Դրան հաջորդում են պատմությունը (32 մարդ), փիլիսոփայությունը (31 մարդ), բանասիրությունը և մանկավարժությունը (27 մարդ), իրավաբանությունը (19 մարդ), քաղաքագիտությունը (12 մարդ) և հոգեբանությունը (10 մարդ):

Պակաս տարածված են համարվում այն մասնագիտությունները, որոնց տիրապետողների թիվը ցածր է մեկ տասնյակից: Այդպիսի 2 մասնագիտություններից առավել մեծ տարածում ունի սոցիոլոգիան, որին տիրապետողների թիվը հասնում է 8-ի: Վերջինիս հաջորդում է մշակութաբանությունը՝ 6 ցուցիչով (տե՛ս *Աղյուսակ 2*).

Աղյուսակ 2

Հումանիտար մասնագիտություններ ունեցողների թիվը Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունում

	Մասնագիտությունը	Թիվը
1	տնտեսագիտություն	48
2	պատմություն	32
3	փիլիսոփայություն	31
4	բանասիրություն և մանկավարժություն	27
5	իրավաբանություն	19
6	քաղաքագիտություն	12
7	հոգեբանություն	10
8	սոցիոլոգիա	8
9	մշակութաբանություն	6

Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրության ներուժի մասին պատկերացում կազմելու կարևոր չափորոշիչ են նաև գիտական և փորձագիտական աշխատանքով զբաղվողների գիտական աստիճանները (տե՛ս *Աղյուսակ 3*): Այս տեսակետից ռուսաստանաբնակ հայ մասնագետները բաժանվում են երկու խմբի՝ բարձրագույն գիտական աստիճաններ ունեցողներ և չունեցողներ:

Աղյուսակ 3

Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունն ըստ գիտական աստիճանների

	Գիտական աստիճանը	Տիրապետողների թվաքանակը
1	Գիտությունների դոկտոր	103
2	Գիտությունների թեկնածու	98
3	Բակալավր, մագիստրոս և 5-ամյա բարձրագույն կրթություն ունեցող	28

Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրության ներուժը գնահատելիս կարևոր ցուցիչ է նաև այդ հանրությո՞րը ներկայացնող անհատների գործունեության տեղաբաշխվածությունը: Այստեղ որոշակի տարբերակում է մտցվում Մոսկվայում ու Սանկտ Պետերբուրգում և Ռուսաստանի այլ քաղաքներում ապրող և գործող անձանց միջև: Մոսկվան և Սանկտ Պետերբուրգն ավանդաբար եղել են Ռուսաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտակրթական կյանքի խոշոր կենտրոնները: Անգամ Ռուսաստանի Սահմանադրությամբ է նրանց տրվում դաշնային նշանակություն ունեցող քաղաքների կարգավիճակ, որով նրանք հանդես են գալիս որպես ՌԴ սուբյեկտներ: Հետևաբար, Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում գտնվող ակադեմիական կառույցները և «ուղեղային կենտրոնները» համեմատական առավելություն ունեն Ռուսաստանի քաղաքներում գործող նմանատիպ կառույցների նկատմամբ: Դառնալով Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունը կազմող անհատների տեղաբաշխվածությանը՝ նշենք, որ նրանց գերակշիռ մեծամասնությունն ընդգրկված է Դաշնության խոշոր կենտրոններ Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի ակադեմիական և վերլուծական կառույցների գործունեության մեջ: Սա նույնպես դրական ցուցանիշ է:

Այսպիսով, Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրության շրջանում գերակշռում են հումանիտար ոլորտի մասնագիտությունները, որոնցից առավել տարածված են տնտեսագիտությունը, պատմությունը, փիլիսոփայությունը, բանասիրությունն ու մանկավարժությունը, իրավաբանությունը, քաղաքա-

գիտությունը և այլն: Կրթվածության առումով գերակշիռ մեծամասնություն ունեն գիտությունների դոկտորները և թեկնածուները: Աշխարհագրական տեղաբաշխվածության առումով, Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրության մեծ մասն աշխատում է Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում:

Ստորև ներկայացնում ենք Ռուսաստանի Դաշնության հայ գիտավերլուծական հանրության ներկայացուցիչների ցանկը.

ՑԱՆԿ

ՈՒՒ հայ գիտավերլուծական հանրության ներկայացուցիչների

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
1.	Աբգարյան Էրվարդ Արամի (Абгарян Эдвард Арамович)	Փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների դոկտոր	Մոսկվայի բիզնեսի և իրավունքի ինստիտուտի ռեկտոր	rektor@st7.ru
2.	Աբովյան Աշխեն Վալիկովի (Абовян Алхен Валиковна)	Բանասեր, բանասիրական գիտությունների թեկնածու	Հարավային դաշնային համալսարանի (Ռոստովի պետական համալսարան) բանասիրության և լրագրության ֆակուլտետի զանգվածային հատորդակցության միջոցների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրության և լրագրության ֆակուլտետի ուսումնական հեռուստաստուդիայի խմբագիր	abovyan@rambler.ru
3.	Ադամյան Թամարա Զավենի (Адамьян Тамара Завеновна)	Սոցիոլոգ, ազդեցիկական գիտությունների դոկտոր	Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Սոցիոլոգիայի ինստիտուտի մշակույթի ազդեցիկայի սեկտորի գլխավոր գիտաշխատող, Կառավարման պետական համալսարանի (ԼՄՄ) մշակույթի, կինոյի և հեռուստատեսության ոլորտում կառավարման ամբիոնի պրոֆեսոր	tamara-adamiants@yandex.ru

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Նշխատվայր	Գրայն
4.	Արամիկա Կարինե Քոլբերի (Адамова Карине Рубеновна)	Տնտեսագետ, տնտեսագիտության բեկիստու	Քուսաստանի Դաշնության կառավարության առկիթեր Ֆինանսական համալսարանի «Ֆինանսական շուկաներ և ֆինանսական ինժեներինգ» սմբրնի քղեկտ	adamoва_karina@ rbcmail.ru
5.	Արիբեկով Միխայիլ Հրայտի (Арибеков Михаил Грантович)	Տնտեսագետ	Քուսաստանի Դաշնության կառավարության առկիթեր Ֆինանսական համալսարանի բիզնեկի վրջագային քղաքոց	
6.	Ազգալուդ Հարրի Հայկի (Азгальдов Гарри Гайкович)	Տնտեսագետ, տնտեսագիտության քղկտաք	Քուսաստանի Գիտությունների սկայեկիայի Կենտրոնական տնտեսա-վարեկնաղկական ինտիտուտի ներքառնային նախագծերի վերքառնության լարքառառիայի գիխալոր գիտաղխառաղ	
7.	Ազնաուրյան Ալեքսանդր Քոննինի (Азнаурян Александр Романович)	Տնտեսագետ	Տնտեսագիտության քարծրա- գույն քղաքոցի (Մոսկվա) Հարկային վեկեղնեկեթի և տե- ղարծ գույքի տնտեսության ինտիտուտի վեկեղեկեր	

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
8.	Ալեքսանյան Արմեն Գուրգենի (Александр Гургенович)	Փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների թեմավածու	Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հեռավոր Արևել- քի ինստիտուտի Գիտական ինֆորմացիայի և փաստա- թղթավորման կենտրոնի առա- ջատար գիտաշխատող	
9.	Ալթունյան Ալեքսանդր Հենրիխի (Алтунян Александр Генрихович)	Բանասեր, բանասիրական գիտությունների թեմավածու	Մոսկվայի Միջազգային համալսարանի լրագրության ֆակուլտետի դեկանի ստեղծակալ, որոցենտ	a_altnyan@ yahoo.com
10.	Ալբուրով Ալեքսանդր Իվանի (Акопов Александр Иванович)	Բանասեր, բանասիրական գիտությունների դոկտոր	Հարավային դաշնային համալ- սարանի բանասիրության և լրագրության ֆակուլտետի զանգվածային հատրդակցու- թյան միջոցների ամբիոնի պրոֆեսոր	
11.	Ալբուրով Անդրանիկ Սումբատի (Акопов Андраник Сумбатович)	Ինժեներ, ստեղծակալական գիտությունների դոկտոր	Տնտեսագիտության բարձրա- գույն դպրոցի (Մոսկվա) Բիզ- նես-ինֆորմատիկայի ֆակուլ- տետի Բիզնես-վերլուծության ամբիոնի պրոֆեսոր	Aakopov@hse.ru

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատակարար	Կապ
12.	Անուշուկ Գառնիկի Վլադիմիրի (Акопов Гарник Владимирович)	Հոգեբան, հոգեբանական գիտությունների դոկտոր	Մեծահիգլան պետական սո- ցիալ-հումանիտար ակադե- միայի հոգեբանության ֆա- կուլտետի դեկան	info-psy@rambler.ru
13.	Ավուսյուլ Գրիգորի Լևոնիդի (Акопов Григорий Леонидович)	Քաղաքագետ, քաղաքական գիտությունների թեկնածու	ՈՂ նախագահին արդիւթեղ Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ռու- սաստանյան ակադեմիայի Հարավրուսաստանյան ինստիտուտ-վեանսեմսեմսեմ Քաղաքագիտության և էթնոքա- ղաքականության տվրինի վարիչի գիտական աշխատան- քի գծով տեղակալ, Եվրա- սիական բաց ինստիտուտի դա- սախու, Ցանցային քաղաքա- կանության տեղեկատվա- վերլուծական պրոյատի (www.podinet.ru) հեղինակ և ստեղծող	director@rfmstrusa.ru

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
14.	Աղալիրզյան Բգոր Ռուբենի (Агамирзян Игорь Рубенович)	Մաթեմատիկոս, ֆիզմաթ գիտությունների թեկնածու	«Ռուսաստանյան վենչուրային ընկերություն» ԲԲԸ գլխավոր տնօրեն, կառավարման նախագահ, ՌԴ նախագահին առնչվող Ռուսաստանի տնտեսության արդիականացման և տեխնոլոգիական զարգացման հանձնաժողովի անդամ, ՌԴ կառավարության նախագահին առնչվող բարձր տեխնոլոգիաների և նորարարությունների հանձնաժողովի անդամ, Ռուսաստանի Դաշնության երկարաժամկետ (մինչև 2020թ.) սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգի (Ստրատեգիա-2020) աշխատանքների «Անցում նորարարությունների խթանումից աճին» դրանց հիման վրա» փորձագիտական խմբի համադրված անդամ	
15.	Աղալիրզյան Կարեն (Агамиров Карэн)	Երաժարան, իրավաբանական գիտությունների թեկնածու	«Ազատություն» ռադիոկայանի հաստուկ թղթակից	

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատակարար	Կապ
16.	Արարիկյան Արվիգ Գեգեղ (Աղանբեյան Ազել Դեզեյան)	Տնտեսագետ, տնտեսագիտության ընկերակազմի ընկերակազմի	ՈՂ կառավարման մասին օրենքի Օրոշակների տնտեսության ազդեցության տնտեսական տնտեսության և բարեկեցության ազդեցության վերաբերյալ	aivazian@semi.rssi.ru
17.	Արարիկյան Սերգեյ Հարությունի (Այվազյան Սերգեյ Արտյոնովիչ)	Մաթեմատիկոս, ֆիզիկոս գիտությունների ընկերակազմի	Որոշակների գիտությունների ազդեցության տնտեսական տնտեսական-մաթեմատիկական ինտերակտիվ տնտեսական տնտեսական գծով տնտեսական	
18.	Արարիկյան Վլադիմիր Երևան (Աղբեյան Վլադիմիր Երեմեյան)	Տնտեսագետ, տնտեսագիտության ընկերակազմի	ՈՂ կառավարման մասին օրենքի Օրոշակների տնտեսական տնտեսական-մաթեմատիկական ինտերակտիվ տնտեսական	
19.	Արարիկյան Անդրեյ Հրատիկ (Աղբեյան Դյուբոն Գրանտովիչ)	Փիլիսոփա, փիլիսոփայության գիտությունների ընկերակազմի	Որոշակների գիտությունների ազդեցության տնտեսական տնտեսական-մաթեմատիկական ինտերակտիվ տնտեսական գծով տնտեսական	apressyan@mail.ru rapressya@iph.ras.ru

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
20.	Աջնուվ Աբարով Մերգելի (Адженов Артем Сергеевич)	Բնժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու	Կապի և ինֆորմատիկայի Մոսկվայի տեխնիկական համալսարանի ռեկտոր	
21.	Աջնուվ Ալեքսանդր Մերգելի (Адженов Александр Сергеевич)	Բնժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու	Կապի կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր տնօրեն	
104.	Արդիալայջյան Դաֆֆի (Ardhaldjian Raffy)	Տնտեսագետ	«Ami & Narod» հիշատակի հիմնադրամի հիմնադիր ղեկավար	rardhaldjian@pf-armenia.org
ՔԱԹՈՒՆ				
105.	Կոստանուզյան Տարյա (Goudsouzian Tanya)	Քաղաքագետ, Մերձավոր Արևելքի փորձագետ	«Այ Ջազվիթայի» աշխատակից	
ՖՐԱՆՍԻԱ				
106.	Արթին Օսին-Գարիս (Artin Jean-Garbis)	Պատմաբան	«Հայկական հիշողության հետազոտման և պրիվիլիյացման ասոցիացիայի» հիմնադիր, ղեկավար	aram.asso@wanadoo.fr

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
107.	Բերեկյան Թելմա (Berekian Telma)	Պատմաբան		
108.	Բոյսոն-Չենորկյան Պատրիսիա (Boisson- Chenorthokian Patricia)	Պատմաբան, լեզվաբան, պատմագիտության դոկտոր	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազ- գային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասիրության բաժանմունքի Հայոց պատմու- թյան (միջին դարեր, նոր շրջան), աշխարհագրության և Հայկական քաղաքակրթության դասախոս	
109.	Գալֆայան-Փանոսյան Հիլդա (Galfaian-Panosian Hilda)	Լեզվաբան, արևմտահայերենի մասնագետ	Սոդբորնի համալսարանի հայա- գիտության պրոֆեսոր, Փարիզի «Մաշտոց» հայ լեզվի պաշտ- պանության միության նախագահ	
110.	Գերգերյան Ժերար (Guerguerian Gérard)	Միջազգային իրավաբան	PPG Industries (Europe) իրավա- բանական խորհրդատու	gguerguerian@ carlara.com gerard.guerguerian@ infodis.com
111.	Գևորգյան (Կևորկյան) Ռեյմոն (Հարություն) (Kevorgian Raymond (Harouttium))	Պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր	Փարիզ-8 Մեն Դևի համալ- սարանի Աշխարհաքաղաքակա- նության ֆրանսիական ինստի- տուտի տնօրեն, Նուբարյան գրադարանի տնօրեն	rhkevorgian@ wanadoo.fr

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կայք
112.	Դալգալյան Ժիրեր (Dalgalian Gilbert)	Լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր		
113.	Դեդեյան Օճիրայր (Dédéyan Gérard)	Պատմաբան, պատմագիտության դոկտոր	Սոնսկել/եի Պատվ վարերի համալսարանի պատմության պրոֆեսոր	
114.	Էկամյան Տիգրան (Ekavyan Tigran)	Արևելագետ, Սփյուռքի հարցերով փորձագետ	«France-Arme nie» շաբաթաթերթի թղթակից	tyegavian@gmail.com
115.	Զարիֆյան Օռլիեն (Zarifian Julien)	Քաղաքագետ, աշխարհագրաբանականության փորձագետ, գիտությունների դոկտոր (Ph.D) աշխարհագրաբանականության գծով	Սեյոմ Պոնտոսի համալսարանի Ամերիկագիտության դոցենտ, նույն համալսարանի Քաղաքակրթությունների և համեմատական մշակութային ինքնության հետազոտող	Julien.Zarifian@u-cergy.fr
116.	Թաշճյան Վահե Tachjian Vahé	Պատմաբան, պատմագիտության դոկտոր (Ph.D)	Փայրիզի Նուբարյան գրադարանի հետազոտող www.houshamadyan.org	houshamadyan@gmail.com
117.	Թաֆանկեցյան Գրեգուար (Tafankejian Grégoire)	Հայագետ	«Հայկական կազմակերպությունների համալսարան» Դրոմ Արդեշ» ստոջիակցային կայքի խմբագիր	

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կասկ
118.	Թոթոյան Արփի (Totoyan Arpi)	Լրագրող	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի և Ռուսաստանի ուսումնասիրության բաժանմունքում դասավանդում է արևմտա-իսպերեն	
119.	Թորոսյան Սևակ (Torossian Sévag)	Իրավաբան, փաստաբան, իրավագիտության դոկտոր	Ֆրեական իրավունքի ինստիտուտի գիտական կոմիտեի անդամ	
120.	Լեյլոյան Աննա (Leyloyan Anna)	Արվեստաբան	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի և Ռուսաստանի ուսումնասիրության բաժանմունքի ղեկավար, դասավանդում է Ռուսաստանի և Կովկասի (Հայաստան, Վրաստան) արվեստի պատմություն	
121.	Խուրշուդյան Վիկտորյա (Khurshudyan Victoria)	Լեզվաբան	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասիրության բաժանմունքի ղեկավար	

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կսպ
122.	Հովհաննիսյան Մարտինա (Hovhannessian Martine)	Մոդելորգ, հայագետ	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Ե-վրասիայի ուսումնասիրության բաժանմունքի դասավանդ, Ֆրանսիայի Գիտական ուսումնասիրությունների ազգային կենտրոնի հետազոտության ղեկավար	
123.	Ղազարյան Նիկոլա (Kazarian Nicolas)	Աշխարհագրագետ, ուղղարար աշխարհի պատմության և փորձագետ	Միջազգային և ռազմական հարաբերությունների ինստիտուտի համագործակցող հետազոտող, ՄԲ Մեթո ինստիտուտի ղոցենտ	
124.	Շալյան Ժերար (Chaliand Gerard)	Միջազգային և ռազմավարական հարաբերությունների, գլխաված հակամարտությունների հարցերով փորձագետ	Հակամարտությունների և խաղաղության հետազոտությունների կենտրոնի խորհրդի անդամ	
125.	Մարտիրոսյան Արամ (Mardrossian Aram)	Իրավունքի պատմության, իրավունքի պատմության ղոցավար	Արևմտյան Փարիզի համալսարանի իրավունքի պատմության պրոֆեսոր	

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
126.	Տեր-Մերկերյան Ռոպեր (Dermergerian Robert)	Հայագետ	Պրովանսի համալսարանի հայագիտական ամբիոնի հիմնադիր	
127.	Տեր-Մինասյան Թալին (Ter Minassian Taline)	Պատմաբան, պատմագիտության թեկնածու, միջազգային հարաբերություններին, ԽՍՀՄ և Այսրկովկասի պատմության մասնագետ	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասիրության բաժանմունքի դոցենտ	
128.	Սովետյան Վահագն (Movsesyan Vahagn)	Տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր	Նիսի «EDHEC» բիզնես դպրոցի հետազոտության և զարգացման բաժանմունքի աշխատակից	vahagn.movsesyan@edhec.edu
129.	Մուրաֆյան Արմեն (Կլոդ) Զարենի (Moutafian Armen (Claude) Z.)	Պատմաբան, մաթեմատիկոս, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր	Փարիզի էյուսիսային համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ	
130.	Զոբոյան Հիլդա (Tchoboian Hilda)	Քաղաքագետ, մայրու իրավունքների փորձագետ	Ռոն Ալպի շրջանային խորհրդի անդամ	htchoboian@rhonealpes.fr hilda.tchoboian@gmail.com

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կայք
131.	Պրլսյան Գրիգոր (Beledian Krikor)	Գրող, գրաքննադատ, թարգմանիչ	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասովորության բաժնիումների ղոցենտ, դասավանդում է հայ գրականություն	
132.	Ջաֆայան Անի (Jafalian Annie)	Աշխարհաքաղաքակրթության մասնագետ, Կովկասի և մասնավորապես ԼՂ հիմնադնների վերածագետ	Ժամ Սուլեյմանի անվան ԼՂու-3 համալսարանի ազգ գիտաշխատող և դասավանդ	annie.jafalian@univ-lyon3.fr
133.	Տոնապեղյան-Դեմոպուլոս Անահիտ (Donabedian-Demopoulos Anaid)	Լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր	Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) հայագիտության բաժնի վարիչ, Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասովորության բաժնումների պրոֆեսոր, Փարիզի լեզվաբանների վիճակագրական	adonabedian@inalco.fr

	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Աշխատավայր	Կապ
134.	Տոնավետյան Պատրիկ (Donabedian Patrick)	Արվեստաբան, արվեստագիտության դոկտոր	Էբր-ան-Պրովանսի համալսարանի արտֆեաթր, «Արևելահայկա» ծրագրի նախագահ	
135.	Փիլիպպայան Անի (Philbossian Annie)	Լեզվաբան, մանկավարժ	Մարն-լա-Վալե քաղաքի Հայկական մշակութային միության նախագահ	
136.	Քեբաբջյան ժան Կլոդ (Kebabdjian Jean-Claude)	Լրագրող, փորձագետ	Հայկական Սփյուռքի հետազոտական կենտրոնի (CRDA) հիմնադիր նախագահ	
137.	Քեթչեյան Լևոն (Ketcheyan Levon)	Թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասիրության բաժանմունքում դասավանդում և գրական թարգմանչություն	
138.	Քելեջյան Մելանի (Keledjian Mélanie)	Լեզվաբան	Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Եվրասիայի ուսումնասիրության բաժանմունքի արևմտահայերենի դասավանդում	

ԳԼՈՒԽ 3

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

3.1 Միջազգային փորձը

Սփյուռքի գիտավերլուծական հանրության համախմբման, համագործակցության, Հայաստանի մտավոր շրջանակների հետ տարբեր ձևաչափերով կապերի հաստատման և համահայկական մտավոր ռեսուրսները Հայաստանի և Հայության շահերին ի սպաս դնելու մեխանիզմների մշակման, լուծման ուղիներ առաջարկելու համար կարևոր է այլ երկրների փորձը: Պատահական չէ, որ արդի սփյուռքագետների աշխատանքներում հաճախ հոլովվում է այն միտքը, որ սփյուռքը ոչ միայն արտերկրում բնակվող ժողովրդի մի մասն է, որը որոշ չափով պահպանում է հոգևոր, մշակութային ինքնությունը և ձգտում է չլիզել կապերը պատմական հայրենիքի հետ, այլև առաջին հերթին այն անդրազգային ցանց է, որն իր մեջ պարունակում է հսկայական սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական, տնտեսական և մտավոր ներուժ: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ տարբեր երկրներ իրենց սփյուռքի մաս կազմող այդ հանրությունների գիտելիքներից և պետական կառույցներում մեծ հեղինակություն ունեցող անհատների գործունեությունից օգտվելու հսկայական փորձ ունեն:

Հատկանշական է, որ իսրայելական, հնդկական, չինական, ճապոնական, հունական նորաստեղծ շատ ՈւԿ-ներ կանգնեցին կարևորագույն, այն է՝ ինտելեկտուալ ռեսուրսներով ապահովվելու ինդրի առջև: Մա ստիպեց, որպեսզի կենտրոններն օգտվեն սփյուռքի գիտական-փորձագիտական ռեսուրսներից՝ նպաստելով նաև միջազգային կապերի հաստատմանն արտերկրի նույնանման կառույցների հետ:

Մյուս կողմից, տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Եվրամիությունում գործող վերլուծական կառույցների աճի առկա միտումները նպաստել են ակադեմիական շրջանակներից դուրս հումանիտար գիտական մտքի զարգացմանը և նոր որակ հաղորդել քաղաքագիտական-ռազմավարական մշակումներին: Արտերկրի ՈւԿ-ներում աշխատող փորձագետներն ունեին ռազմավարական մշակումների փորձ և գիտելիք: Չօգտվել այդ ոլորտում նման փորձառություն ունեցող ռեսուրսից՝ մեծ շռայլություն կլիներ վերջիններիս կողմից:

Հատկանշական է, որ որոշ երկրների հաջողվել է մեծ առաջընթաց գրանցել՝ այդ կապերը հասցնելով ինստիտուցիոնալ մակարդակի, ներգրավելով մտավոր ռեսուրսներին ցանցային (*network*) աշխատանքներում, կենտրոնանալով հիմնականում պետական առաջնահերթ նշանակության ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացի վրա: Ցանցային աշխատանքին զուգահեռ՝ մի շարք երկրներ հետևողական աշխատանքի և տևական համագործակցության արդյունքում կարողացել են նաև մի նոր մակարդակ դուրս գալ՝ հիմնադրել վերլուծական կառույցներ արտերկրում, ինչը համարվում է ՈւԿ-ների զարգացման ցուցիչներից մեկը: Հակիրճ անդրադառնանք մի քանի երկրների փորձին:

Համարվում է, որ չինական սփյուռքն ամենամեծն է: Տարբեր գնահատականներով՝ այն հասնում է 45-80 մլն-ի՝ ցրված 150 երկրներում: Գիտական սփյուռքի հետ աշխատանքներ ծավալելու չինացիների փորձերն իսրայելականի հետ զուգահեռ են ընթացել: Մի կողմ թողնելով իսրայելական փորձը, որտեղ շատ սահուն էին ընթացել արտերկրի վերլուծական կառույցներում ընդգրկված ազգությամբ հրեա վերլուծաբանների ու գիտնականների հետ տարվող աշխատանքները, չինականն իր գործելաճով առանձնահատուկ էր: Նախ՝ չինական սփյուռքի գիտավերլուծական կարողություններն օգտագործվեցին առաջին հերթին Չինաստանի տնտեսության մեջ բեկում մտցնելու առումով, և երկրորդ՝ արտերկրում գործող քաղաքական և ռազմավարական հետազոտություններ իրականացնող ինստիտուտներում աշխատող չինացիները ԱՄՆ-Չինաստան ոչ այնքան բարենպաստ հարաբերություններում դարձան միջնորդող օղակ՝ հանդես գալով որպես Չինաստանի արտաքին քաղաքականությանն աջակցող ուժեր:

1998թ. չինական իշխանությունները վերակազմավորեցին Չինաստանի Գիտությունների ակադեմիան, որի արդյունքում, մի կողմից, կրճատվեցին գիտական ինստիտուտները, մյուս կողմից՝ ձեռնարկվեցին քայլեր արտերկրի բարձր որակավորում ունեցող չինացի գիտնականներին և փորձագետներին ներգրավելու հեռավար և տեղում իրականացվող ծրագրերում, բավական բարձր վարձատրությամբ¹: Ֆինանսավորման խնդիրը լուծելու նպատակով 2004թ. ստեղծվեց «Բնական գիտությունների ազ-

¹ Жуджунь Д., Ковалев М., Новик В., Феномен экономического развития Китая, Минск, Издательский центр БГУ, 2008, с. 27.

գային ֆոնդ» կազմակերպությունը, որի ֆինանսական կարողությունները հասնում էին 451 մլն դոլարի (2004): Կազմակերպությունն աջակցեց չինական ծագում ունեցող ամերիկաբնակ գիտնականներին՝ ներգրավվելու երկրի հետազոտական ծրագրերում՝ ստեղծելով սփյուռքի հետ համագործակցելու նոր ձևաչափ¹:

Այնպես որ, տնտեսական և քաղաքական շարժառիթներով էր պայմանավորված սփյուռքի ներուժի օգտագործումը: Այս ողջ շրջայական և անընդմեջ գործընթացն իրականացավ պետության անմիջական մասնակցությամբ: Այն հնարավոր դարձրեց սփյուռքի մտավոր/բիզնես էլիտայի համախմբումը տարբեր ոլորտներում առկա խնդրահարույց առաջադրանքների լուծման շուրջ, որը հետագայում մեծ արդյունքներ գրանցեց: Սփյուռքի մտավոր այդ հատվածին ներգրավեցին ոչ միայն կարծիքներ հայտնելու և քննարկումներ անցկացնելու նպատակով, այլև անմիջականորեն նրանց վստահեցին գործնական քայլեր կատարել, որոնցից մեկն էլ տնտեսական բարեփոխումներ իրականացնելու նախաձեռնությունն էր: Չինական փորձը ցույց տվեց, որ սփյուռքն անգնահատելի դերակատարում կարող է ունենալ ցանկացած ոլորտի զարգացման համար:

Սփյուռքի գիտավերլուծական շերտի հետ համագործակցությանը միտված այլ երկրների շարքում հետաքրքիր է նաև Իսրայելի քաղաքականությունը: Ինչպես Չինաստանը, այնպես էլ Իսրայելը փորձում էին սփյուռքի գիտական ներուժն օգտագործել նորաստեղծ երկրի տնտեսության զարգացման նպատակով: Ամերիկա-իսրայելական գիտական համագործակցության շնոր-

¹ *Миронин С., Утечка мозгов - объективный анализ,*
<http://www.russianengineering.narod.ru/engineering/emigration.htm>

հիվ 1972թ. հիմնադրվեց Ամերիկա-իսրայելական գիտական հիմնադրամը (*The U.S. – Israel Binational Science Foundation – BSF*): Այս հիմնադրամը սուբսիդավորում է գիտության տարբեր ոլորտներին առնչվող հետազոտական ծրագրեր՝ մարդաբանությունից մինչև բիոթեժկական ինժեներիա, ֆիզիկա և շրջակա միջավայրի պահպանության հարցեր: Հիմնադրման օրվանից *BSF*-ը տրամադրել է ավելի քան չորս հազար հետազոտական դրամաշնորհներ շուրջ 480 մլն դոլարի չափով: Նշյալ հիմնադրամին հաջորդեց 1978թ. Գյուղատնտեսության բնագավառում ամերիկա-իսրայելական հետազոտությունների և մշակումների համատեղ հիմնադրամը (*United States-Israel Binational Agricultural Research and Development Fund – BARD*), որը կոչված էր իրականացնելու և աջակցելու երկու երկրների գյուղատնտեսության համար մեծ նշանակություն ունեցող հետազոտություններին և ինովացիաների զարգացմանը¹: Այնպես որ, բնագիտության ոլորտում արտերկրի հետ գիտատեխնիկական համագործակցությունը զգալի օգուտներ բերեց Իսրայելին, որում մեծ էր ԱՄՆ-ում և այլ երկրներում բնակվող ազգությամբ հրեա գիտնականների դերը:

Գալով վերլուծական կենտրոններին՝ պետք է փաստենք, որ այդ ներուժից օգտվելու առաջին փորձերն Իսրայելն իրականացրեց 1950-ական թթ.: ԱՄՆ վերլուծական կենտրոնների շարքում քաղաքական շրջանակներում բավական մեծ հեղինակություն է վայելում «Հանրային կապերի ամերիկա-իսրայելական կոմիտեն» (*American Israel Public Affairs Committee, AIPAC*), որը համարվում է «ուղեղային կենտրոն»: Կենտրոնը հիմնադրվել է ամե-

¹ *Մարության Հ.*, Իսրայելի մրցունակությունը և գիտության դերը, «Գլոբուս. Ազգային անվտանգություն», 2009, թիվ 4 (8), էջ 47-48:

րիկաբնակ հրեաների կողմից 1954թ., որի նպատակն էր երիտասարդ հրեական պետության համար տնտեսական, քաղաքական և ռազմական աջակցություն ապահովել ԱՄՆ կառավարության կողմից: AIPAC-անմիջական նախաձեռնությամբ Իսրայելը 1994թ. ԱՄՆ-ից տնտեսական և ռազմական ոլորտների զարգացման հեռանկարով ստացել է շուրջ 3 մլրդ դոլար, որից 80 մլն դոլարը նախատեսվել է հրեաների հայրենադարձության համար¹: AIPAC-ը յուրաքանչյուր տարի նախագահների և վարչապետերի մակարդակով կազմակերպում է խոշոր հավաքներ, քաղաքական բնույթի գիտաժողովներ՝ ԱՄՆ-ից և Իսրայելից հրավիրված քաղաքական գործիչների, երկու երկրների հայտնի քաղաքագետների, փորձագետների, գիտնականների մասնակցությամբ: Հատկանշական է, որ Իսրայելը ԱՄՆ ՈւԿ-ներում աշխատող ազգությամբ հրեա վերլուծաբանների հետ սկսեց համագործակցել հենց այս շրջանակներում տեղի ունեցած գիտաժողովներից հետո: Նրանցից շատերն այսօր համագործակցում են իսրայելական հեղինակավոր Ռազմավարական հետազոտական կենտրոնների հետ՝ որպես ասոցիացված աշխատակիցներ²:

Վերջին տարիներին սփյուռքի գիտական ներուժին սկսել են ուշադրություն դարձնել ԱՊՀ մի շարք երկրներ՝ Ռուսաստանը³, Մոլդովան, Բելառուսը, որոնք դեռ նման ձևաչափով հնարա-

¹ *Лендман С.*, AIPAC хочет воевать,

http://news.putc.org/news/aipac_khochet_voevat/2012-08-21-1279.

² Իսրայելի պետությանը տարբեր հարցերում աջակցող ԱՄՆ-ում գործող վերլուծական կենտրոններից հայտնի է նաև «*Jewish Institute for National Security Affairs*»-ը, որը ստեղծվել է տեղի հրեական համայնքի օգնությամբ:

³ Տե՛ս *Осина А.*, Российская научная диаспора и подходы к сотрудничеству с ней для развития российской науки, “Теория и практика общественного развития”, 2013, № 8.

վոր համագործակցության մեխանիզմների մշակման փուլում են: Հարկ է նշել, որ այդպիսի խոշոր նախագծերի իրականացման համար չափազանց մեծ կարևորություն է տրվում այս ուղղությամբ նեղ թեմատիկ գիտաժողովների անցկացմանը: Մասնավորապես, 2010թ. տարբեր երկրներից հրավիրված ռուսական ծագում ունեցող գիտնականների և ռազմավարական հետազոտություններ իրականացնող ինստիտուտների վերլուծաբանների անմիջական մասնակցությամբ Սանկտ Պետերբուրգում տեղի ուեցավ «Գիտական սփյուռքը և Ռուսաստանի գիտության ապագան» խորագրով գիտագործնական կոնֆերանս¹:

Կարծում ենք, այս կարգի գիտաժողովներ անցկացնելը Հայաստանում շատ նպատակահարմար է, քանի որ որքան էլ փորձենք սփյուռքին մասնակից դարձնել գիտական և ռազմավարական հետազոտություններին, անհրաժեշտ է նախապես պատրաստ լինել լսելու այդ հանրույթի կարծիքներն ու տեսակետներն այս հարցի շուրջ: Մոլդովան, Ռուսաստանը, Բելառուսը և մի քանի այլ երկրներ հենց այս տրամաբանությամբ էլ շարժվում են: Հետաքրքիր է, որ Ռուսաստանը սփյուռքի գիտնականների և վերլուծաբանների ցանկում ներառում է նաև ազգությամբ հայերի, որոնք ծնունդով Ռուսաստանից են և, փաստորեն, իրենց գիտական կարողությունները ներդնում են այդ երկրում:

Միջազգային փորձին անդրադառնալիս հնարավոր չէ շրջանցել Թուրքիան, որի աշխատանքները, հատկապես «ուղեղային կենտրոնների» հետ, անմիջականորեն վերաբերում են ՀՀ,

¹ Գիտաժողովի զեկույցներին ծանոթանալու համար տե՛ս Научная диаспора и будущее российской науки (конференция 2010), <http://www.lektorium.tv/course/?id=22763>.

ԼՂՀ և Սփյուռք եռամիասնությանը: Արտերկրի փորձագիտական ռեսուրսներին պետական առաջնահերթ խնդիրներին հաղորդակից դարձնելու և ընդհանուր նպատակների շուրջ մոբիլիզացնելու հարցում վերջին տասնամյակում մեծ ակտիվություն է ցուցաբերում Թուրքիան: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում թուրքական ֆինանսավորմամբ «ուղեղային կենտրոններ» ունենալը, ինչպես Իսրայելի և մի շարք այլ երկրների պարագայում է, ընդօրինակելի է դարձել Թուրքիայի համար: Վերջիններս դիտվում են որպես այլընտրանքային «դիպլոմատուս» կամ լոբբիստական խմբեր, որոնցում ընդգրկվում են առաջին հերթին արտերկրի առաջատար բուհերի և «ուղեղային կենտրոնների» ազգությամբ թուրք աշխատակիցները: Կան բազմաթիվ կառույցներ, որոնք մոբիլիզացնում են արտերկրի թուրք ինտելեկտուալներին տարբեր ինստիտուտների, քաղաքական պլատֆորմների շուրջ, և այսպես կոչված «վերլուծաբանների համագլխի լիգա» ստեղծելու ճանապարհին են: Արտերկրում հիմնադրված թուրքական ռազմավարական հետազոտություններ իրականացնող կենտրոններից են Մեծ Բրիտանիայում՝ Ռազմավարական հետազոտությունների և վերլուծությունների կենտրոնը (*CESRAM*), ԱՄՆ-ում՝ Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը (*SETA*), Լոբբիստական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (*LOBISAV*), Ֆրանսիայում՝ Բոսֆորի ինստիտուտը և այլն:

Հատկանշական է, որ թուրքական վերլուծական շրջանակներից սերած ներկայիս արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն բարձր է գնահատում այս կառույցների դերը երկրի

ներքին և արտաքին քաղաքականության զարգացումներում՝ դրանք ծառայեցնելով որպես այլընտրանքային «դիպկորպուս»՝ վերջիններիս միջոցով վարելով նաև Թուրքիա-Հայաստան հարաբերություններում սեփական դիրքորոշումներն առաջ մղելու քաղաքականություն: Նման պայմաններում Հայաստանի գիտական և հատկապես փորձագիտական հանրույթը մշտապես բախվելու է այս կառույցների՝ թուրքական պետության կողմից հրամցված տեսակետներին, առաջարկվող այս կամ այն քաղաքական բանաձևերին: Այս իրավիճակը մեզ թելադրում է համախմբել ՀՀ և Սփյուռքի առկա գիտական, փորձագիտական մտավոր ռեսուրսները, ինչը թույլ կտա Հայության առջև ծառայած ռազմավարական նշանակության ցանկացած հարցում կարծիքների և տեսակետների փոխանակման միջոցով ձևավորել ընդհանուր մոտեցում՝ թուրքական «հինգերորդ իշխանության» քայլերին դիմագրավելու համար:

Այնուամենայնիվ, սփյուռքի գիտավերլուծական հանրույթի հետ կապեր հաստատելու տարբեր երկրների որոշման վրա ազդել են մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել.

- Սփյուռքի հետ կապերի և համագործակցության նոր ձևաչափի ստեղծումը
- Տարբեր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը
- Ներքին և արտաքին քաղաքականության մեջ փոփոխությունների կատարումը
- Նոր որակի հաղորդումը ռազմավարական մշակումներին
- Հետազոտական նոր ոլորտների ներբերումը (քաղաքական կանխատեսումներ և այլն)

- Կադրերի պատրաստումը, փորձի փոխանակումը
- Քարոզչական (լրբբիստական) գործունեությունը և այլն:

Այսպիսով, սփյուռքի գիտավերլուծական հանրույթի հետ համագործակցող այլ երկրների հաջողությունը պայմանավորված էր երկու գլխավոր հանգամանքներով՝ պետական միջամտությամբ և գործարար աշխարհի անմիջական աջակցությամբ: Պետական իշխանություններն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին փորձագիտական և ակադեմիական ռեսուրսները դիտարկեցին որպես տնտեսական, գիտակրթական, քաղաքական և այլ ոլորտներին վերաբերող քննարկումները հարստացնող ռեսուրս:

3.2 Համագործակցության առաջարկվող ուղիներ

Ներկայում արտերկրի հայության մտավոր ներուժը Հայության խնդիրների լուծմանը ծառայեցնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել արդի պայմաններին բնորոշ մի շարք իրողություններ: Այդպիսիք են.

- Արտերկրում ինտելեկտուալ ոլորտում բարձր դիրքի հասած հայազգի մտավորականները կտրված են համայնքային կյանքից՝ գրեթե ամբողջությամբ և անմիջականորեն ինտեգրված լինելով տվյալ երկրի հասարակությանը: Նրանց մտավոր գործունեության արդյունքները կարծես թե լիովին ի սպաս են դրվում այդ երկրների պետական-քաղաքական կառույցներին՝ ծառայեցվելով վերջիններիս ազգային շահերին:

- Մեր օրերում նրանց հայրենադարձությունը՝ վերադարձը և բնակությունը Հայաստանում, իրատեսական չէ՝ հաշվի առնելով, մի կողմից, նրանց խոր ինտեգրվածությունն իրենց երկրների կյանքում, մյուս կողմից՝ ՀՀ ոչ այնքան բարենպաստ պայմանները:

Այս իրողությունները հաշվի առնելով՝ նպատակահարմար է շեշտը դնել արտերկրի հայ գիտնականների և փորձագետ-վերլուծաբանների հետ հեռավար աշխատանքի վրա, ինչը կարող է ստանալ դրսևորման հետևյալ ձևերը.

Անհատական հետազոտությունների պատվիրում: Հայաստանի և Հայության համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներով կարելի է բարձրորակ հետազոտություններ պատվիրել Սփյուռքի ներկայացուցիչ հայ փորձագետներին:

Կոլեկտիվ հետազոտությունների պատվիրում: Նման թեմաներով կարելի է պատվիրել նաև կոլեկտիվ հետազոտություններ, որում ընդգրկված կլինեն Սփյուռքի մեկից ավելի փորձագետներ և գիտնականներ: Այս կերպ, ըստ էության, կձևավորվեն Սփյուռքի հայ փորձագետների աշխատանքային խմբեր: Կարող են կատարվել նաև կոլեկտիվ հետազոտություններ՝ դրանցում ներգրավելով սփյուռքահայ և հայաստանաբնակ մասնագետների:

Տարբեր ձևաչափերով հանդիպում-քննարկումների կազմակերպում: Կոնկրետ խնդիրների շուրջ (ԼՂՀ հիմնահարց, հայթորքական հարաբերություններ, Հայաստանի զարգացման ռազմավարություն և այլն) կարելի է Հայաստանի և Սփյուռքի գիտնականների ու փորձագետների մասնակցությամբ կազմա-

կերպել պարբերական գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ և այլ ձևաչափերով հանդիպում-քննարկումներ: Նպատակահարմար է լայնորեն կիրառել ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների հնարավորությունները (օրինակ՝ առցանց դասախոսությունների, գիտաժողովների և այլնի կազմակերպում):

Հարկ է նշել, որ 2012թ. նոյեմբերին ՀՀ Սփյուռքի նախարարության, ԵՊՀ-ի և «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից կազմակերպված Քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողովը, թեևս, այս ուղղությամբ առաջին քայլն էր: Համաժողովի թեման ընդհանրական էր՝ «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները», ինչն առաջին նմանատիպ համաժողովի համար բնական է: Հետագա նման համաժողովների կազմակերպման ժամանակ, սակայն, թեմատիկայի ընտրության հարցում նպատակահարմար է կենտրոնանալ ավելի նեղ խնդիրների վրա:

Արտերկրի հայ գիտնականների և փորձագիտական հանրության հետ հեռավար աշխատանքի դյուրացումը և արդյունավետության բարձրացումն անխուսափելիորեն ենթադրում են նաև ինստիտուցիոնալ կառույցների ստեղծում, որոնց ամբողջությունը պետք է ունենա ցանցային նկարագիր: Ըստ այդմ՝ նպատակահարմար է տարբեր երկրներում (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա և այլն) հասարակական կազմակերպությունների կարգավիճակով ստեղծել հայ փորձագետների միություններ: Ակնհայտ է, որ նման կառույցների հետ աշխատանքն ավելի մեծ արդյունավետություն կարող է գրանցել, քան առանձին անհատ փորձագետներինը:

Ցանցային կառուցվածքը ենթադրում է, որ առանձին երկրների հայ փորձագետներին միավորող կառույցներն իրենց հերթին միավորվեն տարածաշրջանային, իսկ վերջիններս էլ՝ համահայկական միության մեջ: Այս պարագայում, բացի այն, որ Սփյուռքի մտավոր ներուժի կազմակերպումը կստանա ցանցային կառույցի տեսք, ևս մեկով կավելանա նաև համազգային կառույցների թիվը: Իսկ համազգային կառույցների հետ աշխատանքը շատ ավելի արդյունավետ է դարձնում Հայաստան-Սփյուռք գործակցությունը:


2012թ. Հայաստանում ստեղծված Հայկական հետազոտությունների ցանցային ինստիտուտը (*ՀՀՑԻ - Armenian Research Network Institute*) կարելի է դիտել որպես այս ուղղությամբ կատարված առաջին քայլ: Առաջին փուլում այս ինստիտուտը՝ ցանցային կազմակերպչական մեթոդների կիրառմամբ, պետք է ձևավորի ազգային փորձագիտական հանրություն:

ՀՀՑԻ կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքները

Ենթադրվում է ՀՀՑԻ աշխատանքներն իրականացնել հետևյալ մեթոդներով.

1. Վերլուծել առաջատար այլ գիտական կենտրոնների կանխատեսումներն ու սցենարները գլոբալ և տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ քաղաքականության, հասարակագիտության և տնտեսության ոլորտներում: Այս գործառույթը պետք է իրականացնի հայաստանյան վերլուծաբանների հատուկ ընտրված խումբը՝ *Համաշխարհային թրենդների վերլուծության կենտրոնի* աշխատակիցները (**A** խումբ, տե՛ս *Գծանկար 1*):

Գծանկար 1
 Հայկական հետազոտությունների ցանցային ինստիտուտի (ՀՀՏԻ) կառուցվածքը



2. Պատվիրել կանխատեսումային աշխատանքներ նախապես որոշված չափանիշներով ընտրված փորձագետների սահմանափակ (բայց ոչ երկուսից պակաս յուրաքանչյուր ոլորտում) շրջանակին: Այս մեթոդը, որը կիրառվում է ռեսուրսների խնայողության նպատակով, պայմանականորեն կարելի է անվանել «ֆոկուս Դելֆի», քանի որ այն՝ ի տարբերություն «լիարժեք Դելֆիի», չի պահանջում մեծ թվով փորձագետների մասնակցություն: Այս աշխատանքն իրականացնում են Հայաստանի և Սփյուռքի առաջատար փորձագետները՝ ինստիտուտի քաղաքական կանխատեսումների (*B*), հասարակական կանխատեսումների (*C*) և տնտեսական կանխատեսումների (*D*) կենտրոնների կազմակերպչական շրջանակում:
3. *A* խմբի աշխատակիցները պետք է իրականացնեն *B*, *C* և *D* խմբերի արդյունքների տրամաբանական, հարաբերական և կոնտենտ վերլուծություն:
4. *A*, *B*, *C* և *D* խմբերն աշխատանքների հետազոտական փուլի ավարտից հետո պետք է համատեղ քննարկեն ստացված արդյունքները միջդիսցիպլինար մոտեցումների և «ուղեղային գրոհի» մեթոդների կիրառմամբ: Քննարկումների հիման վրա կազմվում են ամփոփիչ փաստաթղթեր, և համատեղ մշակվում է ընթացակարգ՝ հետազոտությունների հաջորդ փուլի իրականացման համար:
5. Ամփոփիչ փաստաթղթերը և դրանց հիման վրա կազմված առաջարկությունները և հետագա հետազոտությունների պլանները ներկայացվում են Հայաստանի և հայկական

հանրության մակարդակով որոշումներ կայացնելու համար պատասխանատու պետական և ազգային կառույցներին:

6. Նյութերի մի մասը հրապարակվում է տարեգրքերի տեսքով և լայնորեն տարածվում տեղեկատվական դաշտում (ելնելով «ապագայի ձևավորումը ապագայի կանխատեսումների մասին տեղեկատվության միջոցով» հայեցակարգից):

Նախատեսվում են *ՀՀՑԻ* ստեղծման, կառավարման և գործունեության հետևյալ կազմակերպչական սկզբունքները.

1. *ՀՀՑԻ* հիմնադրման վերաբերյալ քաղաքական որոշումների ընդունում:
2. Պետական և քաղաքական կառույցների վերին օղակների և Հայաստանի ու Սփյուռքի ազգային կապիտալի ներկայացուցիչներից կազմված Հիմնադիրների խորհրդի (*ՀԽ*) ձևավորում:
3. Հայաստանի պետական, քաղաքական և հետազոտական կառույցների ներկայացուցիչներից բաղկացած քաղաքական փորձագիտական խորհրդի (*ՔՓԽ*) ձևավորում: *ՔՓԽ* կազմում ընդգրկված է գործադիր տնօրենը, որին հաստատում է *ՀԽ*-ն:

ՔՓԽ գործառույթներն են.

- *ՀՀՑԻ* մանրամասն կառուցվածքի մշակում (*պլանավորման խմբի* հետ համատեղ) և աշխատակիցների հաստիքացուցակի ձևավորում (տե՛ս *Գծանկար 1*),
- *A* կենտրոնի և *պլանավորման խմբի* հետ համատեղ առաջնային համազգային խնդիրների ցանկի կազմում, հետազոտությունների թեմատիկայի ճշգրտում և աշխատանքների առաջին փուլի պլանի հաստատում,
- *կազմակերպչական բաժնի* կողմից առաջարկված, նախագծի իրականացմանը ներգրավված հայրենական և օտարերկրյա փորձագետների կազմի հաստատում,
- *A* կենտրոնի և *պլանավորման խմբի* հետ համատեղ *B, C և D* կենտրոնների աշխատանքների մշտադիտարկում և վերահսկողություն (տեսակոնֆերանսների ժամանակ միջանկյալ հաշվետվությունների և քննարկումների վերլուծության միջոցով),
- աշխատանքների ավարտից հետո *կազմակերպչական բաժնի* հետ համատեղ ՀՀՑԻ ամենամյա կոնֆերանսի կազմակերպում՝ ստացված արդյունքները քննարկելու և պետական, քաղաքական և ազգային կառույցներին ներկայացնելու համար:

ՔՓԽ-ն նաև որոշումներ է կայացնում ՀՀՑԻ աշխատությունների հրատարակման շուրջ՝ *հրատարակչական բաժնի* միջոցով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտության արդյունքներից հետևում է, որ արտերկրի գիտավերլուծական կառույցներում աշխատում են մեր բազմաթիվ հայրենակիցներ: Ներկայացվել են տեղեկություններ ավելի քան 500 մասնագետների մասին, սակայն այս թիվը հեռու է սպառիչ լինելուց: Նրանց մեծ մասը գործում է երկու առանցքային երկրում՝ Ռուսաստանում և ԱՄՆ-ում: Ռուսաստանում սույն աշխատության մեջ դիտարկված հայ մասնագետների թիվը գերազանցում է 250-ը, իսկ ԱՄՆ-ում՝ 120-ը:

Միևնույն ժամանակ, մեր ստացած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտերկրի հայ գիտավերլուծական հանրությունը, ընդհանուր առմամբ, համախմբված չէ: Սփյուռքում չափազանց քիչ են հայ գիտնականներին և վերլուծաբաններին միավորող ինստիտուցիոնալ կառույցները: Մտահոգիչ է նաև այն, որ հայ մասնագետները միշտ չէ, որ կապ են պահպանում և համագործակցում իրենց հայաստանյան գործընկերների հետ:

Վերոհիշյալ մտահոգիչ երևույթների վերհանումը կամ «ախտորոշումը» հուշում է Սփյուռքի գիտավերլուծական հանրության հետ տարվելիք աշխատանքի հիմնական նպատակներն ու օրակարգը: Որպես այդպիսի խնդիրներ կարելի է մատնանշել հետևյալները.

1. *Արտասահմանյան երկրներում աշխատող հայ գիտնականների և վերլուծաբանների միջև փոխադարձ կապերի աշխուժացումը:* Ատոմացվածության հաղթահարմանն ուղղված այս խնդրի լուծումը ենթադրում է արտերկրի հայ համայնքների ներկայացուցիչ գիտնականների և փորձագետների տարբեր ձևաչափերով համագործակցության և փոխադարձ շփումների ընդհանուր դաշտի ապահովում: Այս հարցի լուծման տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև Սփյուռքի համայնքներում հայ գիտնականներին միավորող ինստիտուցիոնալ կառույցների ստեղծումը:
2. *Սփյուռքի հայ գիտնականների և վերլուծաբանների կողմից Հայաստանի համար հրատապ հետազոտությունների խթանումը:* Սույն խնդիրը նպատակ ունի Սփյուռքի հայ մտավոր ներուժը համադասել համազգային խնդիրների իրականացմանը: Անհրաժեշտ է արտերկրի ակադեմիական կառույցներում և վերլուծական կենտրոններում աշխատող հայ մասնագետների համար ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի նրանք կատարեն նաև հետազոտություններ և նախագծեր Հայաստանի համար հրատապ խնդիրների վերաբերյալ:
3. *Հայաստանի հետ կապերի ամրապնդումը:* Այս խնդիրը նպատակ է հետապնդում խթանել գիտավերլուծական աշխատանքի բնագավառում Հայրենիք-Սփյուռք համագործակցությունը: Արդի փուլում ստեղծված իրողությունները հուշում են, որ մտավոր գործունեության ոլորտում Հայրենիք-Սփյուռք համագործակցության հարցում նպատակա-

հարմար է շեշտը դնել հեռավար աշխատանքի վրա: Այն ենթադրում է արտերկրի հայ գիտնականներին և փորձագետներին անհատական և կոլեկտիվ հետազոտությունների պատվիրում, ժամանակակից հեռահաղորդակցային տեխնոլոգիաների կիրառմամբ առցանց գիտաժողովների, աշխատաժողովների, դասախոսությունների կազմակերպում և այլն: Գիտավերլուծական աշխատանքի բնագավառում Հայրենիք-Սփյուռք համակարգված փոխգործակցության ապահովման տեսակետից կարևորագույն նշանակություն կարող է ունենալ Հայաստանի և Սփյուռքի գիտական և փորձագիտական հանրությունները միավորող համազգային ցանցային կառույցի գործունեությունը: Որպես նման կառույց կարելի է դիտել 2012թ. Հայաստանում ձևավորված, բայց դեռ իրապես չգործող Հայկական հետազոտությունների ցանցային ինստիտուտը (ՀՀՑԻ):

Ինչպես ցույց է տալիս միջազգային (մասնավորապես՝ չինական և հրեական) փորձը, գիտավերլուծական աշխատանքի բնագավառում Սփյուռքի հետ համակարգված փոխգործակցությունն էական նշանակություն ունի կոնկրետ պետությունների և ազգերի զարգացման համատեքստում:

РЕЗЮМЕ

Из результатов исследования следует, что за пределами Армении в научно-исследовательских структурах работает множество наших соотечественников. В книге представлены сведения о более чем 500 таких специалистов, однако это далеко не исчерпывающая цифра. Большинство из них задействовано в двух ключевых странах – России и США. Численность рассмотренных в этой работе армянских специалистов в России превышает 250, а в США – 120 человек.

Вместе с тем анализ полученных нами данных указывает на то, что армянское научно-аналитическое сообщество зарубежья в целом слабо консолидировано. В Диаспоре крайне мало институциональных структур, объединяющих армянских ученых и аналитиков. Беспокоит также то, что армянские специалисты не всегда поддерживают связи с Арменией и не сотрудничают со своими армянскими коллегами.

Выявление или «диагностика» упомянутых, вызывающих беспокойство явлений подсказывает основные цели и повестку работы, которую нужно проводить с армянским научно-аналитическим сообществом за рубежом. В качестве таких задач можно указать следующие:

1. *Активизация взаимосвязей между работающими за рубежом армянскими учеными и аналитиками.* Решение этого вопроса, нацеленной на преодоление атомизированности, предполагает обеспечение общего пространства для разноформатного сотрудничества и контактов ученых и экспертов из армянских общин. В плане решения этой задачи важное значение имеет и создание институциональных структур, объединяющих армянских ученых Диаспоры.
2. *Стимулирование актуальных для Армении исследований, проводимых армянскими учеными и аналитиками Диаспоры.* Эта задача нацелена на задействование интеллектуального потенциала Диаспоры в решении общенациональных проблем. Необходимо создавать такие условия для работающих в зарубежных академических структурах и «мозговых центрах» армянских специалистов, чтобы они выполняли бы также исследования и проекты по актуальным проблемам Армении.
3. *Укрепление связей с Арменией.* Данная задача нацелена на стимулирование сотрудничества Родина-Диаспора в сфере научно-аналитической работы. Сложившиеся на данном этапе реалии подсказывают, что в сфере интеллектуальной деятельности в вопросе сотрудничества целесообразно акцентировать дистанционную работу. Она предполагает стимулирование индивидуальных и коллективных исследований армянских ученых и экспертов Диаспоры, организацию и проведение он-лайн конференций, семинаров, лек-

ций с использованием современных коммуникационных технологий и т.д. В плане обеспечения скоординированного взаимодействия в сфере научно-аналитической работы важнейшее значение может иметь создание общенациональной сетевой структуры, объединяющей научные и аналитические сообщества Армении и Диаспоры. В качестве подобной структуры можно рассматривать созданный в 2012г. в Армении, но реально еще не действующий Сетевой институт армянских исследований (СИАИ).

Как показывает международный (в частности – китайский и израильский) опыт, координированное сотрудничество с Диаспорой в научно-аналитической сфере имеет важное значение в контексте развития конкретных государств и национальных обществ.

SUMMARY

The results of this research indicate that there is a large Armenian scientific and analytical community abroad. Information about more than 500 specialists is presented in this book, but this number is far from being exhaustive. Most of them work in two key countries – Russia and the USA. This publication covers more than 250 Armenian specialists in Russia and over 120 in the USA.

At the same time the analysis of the information acquired shows that the Armenian academic and analytical community abroad generally is not unified. There are very few institutional entities uniting Armenian scientists and analysts in the Diaspora. Also, it is a matter of concern that the Armenian specialists do not always maintain contacts with their colleagues in Armenia.

The exposure or “diagnosis” of the aforementioned worrisome issues prompts the main goals and agenda of the work to be carried out with the academic and analytical community of the Diaspora. In this regard the following objectives can be pointed out:

1. *Boosting the ties between Armenian scientists and analysts working abroad.* In order to overcome the fragmentation, it is proposed to create a common framework for cooperation and reciprocal communication in various formats between the Armenian scientists and experts in foreign countries. Creation of

institutional structures bringing together scientists from the Armenian communities is also crucial for addressing this issue.

2. *Promoting studies by Armenian Diaspora scientists and analysts on topics that are imperative for Armenia.* This is aimed at consolidating the intellectual potential of the Armenian Diaspora to achieve nationwide goals. It is necessary to create conditions for the Armenian specialists working at academic structures and analytical centers abroad, so that they conduct studies and research of issues critical for Armenia.
3. *Strengthening the ties with Armenia.* This is aimed at boosting Homeland-Diaspora cooperation in the area of academic and analytical activities. The realities at the current stage indicate that it is more reasonable to focus on distant working as far as the intellectual work is concerned in Homeland-Diaspora cooperation. This implies placing orders with Armenian scientists and experts in foreign countries for individual or collective research, organizing online conferences, webinars, lectures, etc. using modern telecommunication technologies. Activities of a nationwide networking organization uniting academic and expert communities of Armenia and Diaspora would be crucially important in terms of achieving Homeland-Diaspora coordinated partnership in the area of scientific and analytical work. The Armenian Research Network Institute (ARNI) established in Armenia in 2012, but yet inactive, can be regarded as such organization.

As the international (particularly Chinese and Jewish) experience has shown, systematized cooperation with diaspora in the field of scientific and analytical activities has been vitally important in the context of development of certain states and nations.

Նշումների համար

ՍՓՅՈՒՌՔԻ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ
*Կազմակերպչական խնդիրներ և
համագործակցության հեռանկարներ*

Հեղինակային խումբ՝
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արեստակես ՄԻՄՎՈՐՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ
Տիգրան ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՌԻՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 12,5 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 250: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: